Ազգ

AZG
armenian newspaper

Հոկտեմբեր 8
1992
Հինգշաբթի

օրաթերթ
Բ տարի, թիւ 104 (196)
գինը 2 ռ.

Երեւան 375010
Հանրապետութեան 47

դասիչ 69149

հեռ. 581841, ֆաքս 562941, տելեքս 243266 CPIRI SU

Հայ-ադրբեջանական սահմանում հանգիստ է

Երեկ եւ նախորդ գիշեր Հայաստանի սահմանամերձ շրջաններում իրավիճակը համեմատաբար հանգիստ էր: Միայն երեկ առավոտյան ժամը 8-ի եւ 9-ի միջեւ ադրբեջանական կազմավորումները Նախիջեւանի տարածքից գնդակոծել են Եղեգնաձորի շրջանի սահմանամերձ Խաչիկ գյուղը: Տուժածների մասին տեղեկություններ չկան:

Ադրբեջանի Թռուզի շրջանի տարածքից կարճատեւ գնդակոծության են ենթարկվել նաեւ Տաուշի շրջանի Այգեպար գյուղն ու հայկական պաշտպանական դիրքերը: Այստեղից նույնպես տուժածների մասին տեղեկություններ չկան: Հայ-ադրբեջանական սահմանի մնացած տեղամասերում իրավիճակը հանգիստ է եղել: ■

Վաղը Լեւոն Տեր-Պետրոսյանը կնախագահի Բիշքեկի գագաթաժողովում

Այսօր առավոտյան Երեւանից Բիշքեկ մեկնեց Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը՝ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի գլխավորությամբ: Ենթադրվում է, որ Բիշքեկ կմեկնեն նաեւ վարչապետ Խոսրով Հարությունյանը, պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը, Հայաստանի զինված ուժերի հրամանատար Նորատ Տեր-Գրիգորյանը, արտգործնախարարի 1-ին տեղակալ Արման Կիրակոսյանը, պաշտոնական այլ անձինք: Ինչպես հայտնվել է նախնական հաղորդագրության մեջ, հերթական գագաթաժողովում այս անգամ կնախագահի Լեւոն Տեր-Պետրոսյանը: ■

Ավստրիայի դեսպան Ֆրիդրիխ Բաուերը կհանդիպի Ռաֆֆի Հովհաննիսյանին

Այսօր Հայաստանի Հանրապետության արտգործնախարար Ռաֆֆի Հովհաննիսյանը կընդունի Ռուսաստանում Ավստրիական Հանրապետության դեսպան Ֆրիդրիխ Բաուերին, որը Երեւան է ժամանել նաեւ Հայաստանում իր դեսպանության հավատարմագիրը հանձնելու առաքելությամբ: Պարոն Բաուերն իր այցի ընթացքում կհանդիպի նաեւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ին եւ ԳԽ նախագահ Բաբկեն Արարքցյանին: Ֆրիդրիխ Բաուերը փորձված դիվանագետ է, երկար տարիներ աշխատել է տարբեր երկրների դեսպանատներում, եղել է ԳԴՀ-ում եւ ԳՖՀ-ում Ավստրիայի դեսպանը, իսկ 1992 թ. ապրիլի 14-ին Հայաստանի կառավարությունը համաձայնություն է տվել Ֆ. Բաուերին Հայաստանի Հանրապետությունում Ավստրիայի լիազոր դեսպան նշանակելու առաջարկին: Նույն օրը արտգործնախարարը կհանդիպի նաեւ Հայաստանում Գերմանիայի գործերի ժամանակավոր հավատարմատար Վոլֆգանգ Բրեքին եւ Հայաստանում Ֆրանսիայի դեսպան Ֆրանս դԱրտենգին: ■

Հայաստանի պետնախարարը մեկնեց Թուրքիա

Երեկ պետական նախարար Գագիկ Շահբազյանի գլխավորությամբ Երեւանից Թուրքիա մեկնեց Հայաստանի կառավարական պատվիրակությունը: Այսօր Հայաստանի ներկայացուցիչները բանակցություններ կվարեն հացահատիկը Թուրքիայից Հայաստան հասցնելու ուղիների վերաբերյալ:

Հիշեցնենք, որ մինչ այդ, արձագանքելով վարչապետ Խոսրով Հարությունյանի խնդրանքին, Թուրքիան համաձայնվել էր 100 հազար տոննա հացահատիկ վաճառել Հայաստանին: ■

Լաչինի միջանցքը հուսալիորեն պաշտպանվում է

Նախօրեին բենզին կորցրել է 20 զինվոր

Ինչպես արդեն տեղեկացրել էինք, հոկտեմբերի 6-ին ադրբեջանական կազմավորումները Ղուբաթլիի շրջանի տարածքից լայնածավալ գրոհ էին ձեռնարկել Լաչինի մարդասիրական միջանցքի ուղղությամբ՝ նպատակ ունենալով գրավել Լաչին շրջկենտրոնը եւ փակել Գորիս-Ստեփանակերտ ճանապարհը: Ինչպես տեղեկացնում են Ղարաբաղի «Նորություններ» գործակալությունը եւ ԼՂՀ ինֆորմպաշտպանության ուժերի շտաբը, հայկական ջոկատներին հաջողվել է ոչ միայն ամբողջովին կասեցնել բենզին գրոհը, այլեւ բենզին հետ շրջել ելակետային դիրքերից զգալիորեն ավելի հեռու: Մարտերի ընթացքում ադրբեջանական բանակը կորցրել է մեկ T-72 տանկ եւ առնվազն 20 զինվոր: Հայկական կողմից գրավվել է մեկ զինվոր, եւս մեկը վիրավորվել է:

Հոկտեմբերի լույս 7-ի գիշերը եւ երեկ առավոտյան վերսկսվել է միջանցքի գոտու հրթիռա-հրետանային հրետակոծությունը: Այնուամենայնիվ, ինչպես տեղեկացնում են վերոհիշյալ աղբյուրները, Գորիս-Ստեփանակերտ ճանապարհը շարունակում է անխափան գործել:

Մինչդեռ Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը տեղեկացնում է, թե իբր ադրբեջանական կազմավորումները երկօրյա մարտերից հետո Լաչինի շրջանում ազատագրել են քանի գյուղ եւ տասը մարտավարական կարեւոր նշանակություն ունեցող բարձունք, որոնցով անցնում է Գորիս-Լաչին-Ստեփանակերտ ճանապարհը: Նախօրեին իբր գրավված Լաչին շրջկենտրոնի եւ այնտեղ իբր բարձրացված Ադրբեջանի դրոշի ճակատագրի մասին ոչինչ չի հայտնվում:

Միաժամանակ Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը խոստովանում է, որ «հայկական էքսպեդիցիոն կորպուսին» հաջողվել է գրավել Ֆիզուլու շրջանի Կուրդաթաղի գյուղը եւ եւս 3 ռուսաբնակ գյուղեր: Ի դեպ նշենք, որ մի քանի օր առաջ ազատագրված Կուրդաթաղի, Մուղանլու եւ Ամիրանլար գյուղերը գտնվում են Մարտունու շրջանում եւ երբեք ռուսաբնակ չեն եղել: Ֆիզուլու շրջանի տարածքում նույնպես որեւէ ռուսական բնակավայր չկա: ■

5 միլիոն դոլլար Հայաստանի փախստականներին

Ամերիկայի հայկական համագումարի (ԱՀՀ) Վաշինգտոնի գրասենյակից հասած հաղորդագրությունը հայտնում է, թե Միացյալ Նահանգների կոնգրեսն իր վերջին նիստին 5 միլիոն դոլլարի օգնություն է էվաերկել *«Լեռնային Ղարաբաղի հակամարտության հետեւանքով Ադրբեջանից բռնագաղթված ավելի քան 300 հազար փախստականների օգտին»:* Սենատոր Ռոբերտ Դոուլի կողմից կոնգրես մտցված թիվ HR 5368 որոշման նախագծի հավելվածը, հայտնում է հաղորդագրությունը, ԱՀՀ-ի եւ հայկական այլ կազմակերպությունների լոբբիստական աշխատանքի շնորհիվ հավաքել է անհրաժեշտ ձայներ բռնագաղթվածներին վերադրումի համար այնքան անհրաժեշտ օգնություն փոխանցելու համար:

Մյուս կողմից, նշվում է հաղորդագրության մեջ, հիշյալ որոշումով ամերիկյան վարչությանը հանձնարարվում է բաշխել բարյուր արտադրող երկրներին մարդասիրական նպատակներով վառելանյութ տրամադրել Հայաստանին ատոմային բերքահավաքին օժանդակելու համար: Միաժամանակ, հանձնարարվել է Միջազգային արժութային հիմնադրամում եւ համաշխարհային դրամական մեջ ամերիկյան ներկայացուցիչներին, որ նպաստեն Հայաստանում տնտեսական բարեփոխումների ծրագրերը ֆինանսավորելու գործում:

Հաղորդագրությունը նշում է, թե ԱՀՀ-ին օժանդակող գլխավոր կազմակերպությունների շարքում են ՌԱԿ-ը եւ ՀԲԸ միությունը: ■

Խորհրդարանը հաստատեց ԱՊՀ տնտեսական դատարանի մասին համաձայնությունը

Հանրակցության երկրների ղեկավարների Բիշքեկի հանդիպման նախօրեին Հայաստանի խորհրդարանը հաստատեց ԱՊՀ տնտեսական դատարանի կարգավիճակի մասին համաձայնագիրը, որն ստորագրվել էր հուլիսին Մոսկվայում:

Ինչպես «Սնարք»-ի թղթակցին հայտնեց ՀՀ ԳԽ իրավական հարցերի հանձնաժողովի նախագահ Կիմ Բալայանը, այդ համաձայնագրին միանալը Հայաստանին հնարավորություն կտա ավելի արդյունավետ լուծել շրջափակման պատճառով չստացված կամ բալանսված աղբանքների փոխհատուցման հետ կապված հարցերը: ■

ՄԱԿ-ը ֆինություն է անցկացնելու Բոսնիայում

Սերբերը առաջանում են

ՄԱԿ-ի հատուկ հանձնաժողովը պատրաստվում է մեկնել Բոսնիա ֆինություն անցկացնելու համար ջարդերի, էթնիկական մաքրագործումների եւ այլ ոճիրների մասին ստացված տեղեկությունների շուրջ: Հետաքննության արդյունքները կարող են, ինչպես հայտնում են ՄԱԿ-ի շրջանակներում, նյուրնբերգյան տիպի դատավարությունների առիթ ստեղծել: Բոսնիա ֆնիչ հանձնախումբ ուղարկելու մասին որոշումը կայացել էր երեքշաբթի օրը, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի նիստում, միաձայն: Այուս կողմից, սերբական ուժերը երեկ շարունակեցին իրենց առաջխաղացումը Բոսնիայում, միաժամանակ կատաղի ռմբակոծության տակ առնելով մայրաքաղաք Սարաեւոյի իսլամական թաղամասերը: Առավոտյան նրանք դայթեցրել էին Բոսնիան խորվաթիային կապող գլխավոր կամուրջներից մեկը, իսկ նախորդ օրը՝ գրավել հյուսիսում գտնվող կարեւոր ռազմական Բոսանսկի Բրոդ քաղաքը: Սերբական հրամանատարությանը մոտ կանգնած շրջանակներից երեկ հայտարարվեց, թե հետեւակը պատրաստվում է գրոհել Սարաեւոյի իսլամաբնակ թաղամասերը: Մասնագետների կարծիքով, իր երկրորդ ծմեռը թեւակոխող հարավսլավական պատերազմն սպառնում է առավել ծավալվել, դարձյալ ընդգրկելով խորվաթիան, որի տարածքի մեկ երրորդը գտնվում է սերբերի ձեռքին: ■

Քուվեյթի խորհրդարանի մեծամասնությունը ընդդիմությունից

Ամփոփվեցին Քուվեյթում կայացած խորհրդարանական ընտրությունների արդյունքները: Պարզվեց, որ ընտրողների մեծամասնությունը փաստորեն դեմ է քվեարկել իշխող ալ-Սաբահ ընտանիքին, իր ձայնը տալով վերջինիս ընդդիմադիր թեկնածուներին: 6 տարվա ընդմիջումից հետո 50 հոգանոց խորհրդարանի անդամներից 35-ը ներկայացնում են հակակառավարական ընդդիմադիր կուսակցություններին եւ անկախականներին: ■

Բրիտանական պահպանողականները երկփեղկվելու վտանգի առաջ

Անգլիայի Բրայթըն քաղաքում կայացող տարեկան համագումարի ընթացքում իշխող պահպանողական կուսակցության շարքերում երեւան եկան խոր տարաձայնություններ Մաաստրիխտի ուխտի նկատմամբ ունեցած տարբեր դիրքորոշումների պատճառով: Թորիների միջեւ եվրոպական միության նկատմամբ լարվածության առիթ են հանդիսացել վերջին շաբաթներին ֆունտ ստեռլինգի կրած հարվածները, որոնցից նոր-նոր է ուշքի գալիս Բրիտանիայի ազգային դրամանիշը: ■

Ելցինն ու Շեւարդնաձեն հաշիվներ են պարզում

Աբխազիայի պաշտպանության շտաբի հաղորդման համաձայն, Վրաստանի Պետխորհրդի զորքերը չորեքշաբթի օրվա ամբողջ ընթացքում Էշերա-Սուխումի շրջանում անընդհատ գնդակոծել են աբխազական դիրքերը: Շտաբում կարծում են, որ այդ ուղղությամբ Թբիլիսին լայնածավալ գրոհ է նախապատրաստում:

Աբխազիայի զինվորական պարեսներ Ի. Նարմանիայի հրամանով ստեղծվել են դիակազմության եւ ավազակության դեմ պայքարող ռազմական խմբեր:

Միաժամանակ, չորեքշաբթի օրը Բորիս Ելցինի եւ Էդուարդ Շեւարդնաձեի միջեւ տեղի է ունեցել «սուր եւ սկզբունքային» հեռախոսային խոսակցություն, հայտնեցին Մոսկվայում Վրաստանի ներկայացուցչությունում:

«ԻՖ»-ին հայտնի դարձավ, որ կողմերը քննարկել են ռուսական զորքերի կողմից Աբխազիայում երկաթուղու հսկողության եւ հնարավոր նոր հանդիպման վերաբերյալ հարցեր: ■

Կոնգրեսը հաստատեց Ադրբեջանին օգնություն տալու նախապայմանները

Ամերիկայի հայկական համագումարի Վաշինգտոնի գրասենյակից տեղեկացնում են, թե Միացյալ Նահանգների կոնգրեսի զույգ պալատները ներկայացուցիչների տունն ու սենատը վավերացրել են «Ազատությունների օգնության օրինագիծը» (Freedom Support Act), որով պետվարչությունը լիազորվում է 505.8 միլիոն դոլլար տրամադրել նախկին խորհրդային հանրապետություններում ռամկավարացման նախաձեռնությունները հաջողեցնելու համար: Միաժամանակ, այն 12.3 մլրդ դոլլարի հավելյալ ներդրում է հանձնարարում Միջազգային վալյուտային հիմնադրամում, որը պատրաստում է տարբեր տեսքի վարկեր տրամադրել վերոհիշյալ հանրապետություններին:

Ինչպես նախապես հայտնել էինք, նախագահ Բուշի վարչությունը վերջերս տրամադիր էր փոխելու վերոհիշյալ օրինագծի այն կետը, որն Ադրբեջանին նյութական մասհանում կատարելու համար նախապայման էր դնում, որ Մ. Նահանգների նախագահը կոնգրեսին զեկուցի Բաքվի կողմից Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի նկատմամբ շրջափակումների եւ ագրեսիվ այլ քայլերի բացահայտ դադարեցման մասին:

Սենատոր Ջոն Ֆ. Քերրիի, ներկայացուցիչ Ուեյն Օուենսի եւ այլոց ջանքերով զույգ պալատները նախագիծը վավերացրել են իր վերոհիշյալ հավելվածով, որով Ադրբեջանի առաջ նախապայմաններ են դրվում ամերիկյան օգնությունից մասհանում ստանալու համար: ■

digitised by A.R.A.R.@

Արտգործնախարարությունը մեղադրում է «Ազգ»ին անձեռնհասության եւ սկանդալ սարքելու մեջ: Մի՞թե

«Ազգ»ի նախորդ համարում նշել էինք, թե արտգործնախարարության մամուլի ծառայության ղեկավար Նելլի Մաբեուայանը զրավոր կներկայացնի նախարարության եւ նախարարի անունից արված հայտարարության տեքստը:

Հայտարարության մեջ, որը վերաբերում էր «Ազգ»ի հրապարակած *«Արհամարհված» նախարարությունը, արտաքին քաղաքականությունը եւ անտրամաբանությունը գործոնը կամ սխալներ, որոնք կրկնելու իրավունք չունենք»* հոդվածին, նշված է, թե *«նախարարի կարծիքով, ոչ դրդեսիոնալ մակարդակով գրված վիճահարույց այդ հոդվածի խոցելի կողմը բավականաչափ հարցեր ու դրդիչներ ընդգրկելն է եւ դրանց անբավարար ուսումնասիրությունը»:*

Այնուհետեւ նշվում է 3 հարցի դրամասխան.

1. Արտգործնախարարությունում աշխատում են 112 տեղացիներ եւ 8 սիյոնոֆահայեր: Նախարարության ղեկավարությունը նրանց միջեւ երբեք տարբերություն չի դրել:

2. Արտգործնախարարության հիմնադրամը նախարարը տնօրինում է միայն հանրապետության նախագահի հետ: Այդ դրամը տրամադրվում է դեսպանատներ բացելու գործին, եւ մինչեւ տարվա վերջ նախատեսվում է դեսպանություններ ունենալ 10 երկրներում:

3. Նախարարը բիկնադահներ չունի: Իր բազմաթիվ ուղեւորությունների ընթացքում նա երկու անգամ օգտվել է բիկնադահի ծառայությունից (Թուրքիա եւ Հունգարիա): Հայտնի է Թուրքիայում տեղի ունեցած միջադեպը: Էրզրումից Կարս ճանապարհին կոտրել են արտգործնախարարին տեղափոխող մերենայի աղակին եւ միայն բիկնադահի միջամտության շնորհիվ է հաջողվել խուսափել տհաճ դրամահարից:

Վերջում ասվում է, թե ամբողջ հոդվածը գրված է մարդկանց հետ ունեցած զրույցների հիման վրա, եւ մասնավոր հայտարարությունները չեն ամրագրվում կոնկրետ փաստերով, իսկ վերջին ժամանակներս կուսակցական մամուլում արտգործնախարարության հասցեին տեղ գտած վատաբանումները հոդվածների հեղինակների մասնավոր կարծիքներն են եւ չեն արտահայտում այդ կազմակերպությունների միասնական դիրքորոշումը:

Մեր կողմից միայն ավելացնենք, որ մինչ նախարարի խոսացած հարցազրույցը հարկ է ձեռնպահ մնալ այս հայտարարության որեւէ մեկնաբանությունից, բերեւս առաջարկելով հոդվածը մեկ անգամ եւս ընթերցել, փորձել հասկանալ, թե որոնք են բարձրացված գլխավոր հարցերը, ո՞ւմ դեմ է ուղղված հոդվածը եւ նկատել, թե ո՞ւր են կորել նշված փաստերը:

ՀԱԿՈԲ ՍՍՍՏՐՅԱՆ

Ղարաբաղի դաշտպանության պետկոմի նախագահը Հայաստանում

Աշխատանքային այցով Երեւանում է գտնվում ԼՂՀ դաշտպանության պետական կոմիտեի նախագահ Ռոբերտ Քոչարյանը: Ինչպես «Սնարք»ի թղթակցին ասաց ԼՂՀ տեղեկատվության եւ մամուլի դեպարտամենտի ղեկավար Մարսել Պետրոսյանը, այցի նպատակը *«Հայաստանի ղեկավարության հետ տնտեսական-ֆինանսական հարցերով խորհրդակցություններն անցկացումն է, ինչպես նաեւ Հայաստանի եւ ԼՂՀ-ի միջեւ հետագա հարաբերությունների զարգացումը»:* ■

Կուսակցությունների հեղինակությունը խիստ ընկել է

ՀՀ ԳԱ սոցիոլոգիական հետազոտությունների կենտրոնը հասարակական կարծիքի հարցում է անցկացրել Հայաստանի քաղաքական կուսակցությունների ոեյտինգը որոշելու նպատակով: Այսպես, *«Ո՞ր քաղաքական կուսակցությանը (շարժմանը) եք նախապատվություն տալիս»* հարցի դրասխանները դասակարգվել են հետեւյալ կերպ.

ՀՅԴ	20 տոկոս
ՀՀՇ	8.17 տոկոս
ՀՈԱԿ	4.33 տոկոս
Կոմկուս	3.83 տոկոս
ԱԻՄ	2.67 տոկոս:

Այս հարցումը նաեւ ի հայտ բերեց, որ Հայաստանում գոյություն ունեցող կուսակցություններից ոչ մեկը լիովին չի արտահայտում Հայաստանի քաղաքացիների իղձերը: Այդ է վկայում այն փաստը, որ հարցվածների մեծամասնությունը 58.67 տոկոսը, Հայաստանում գործող կուսակցություններից ոչ մեկին նախապատվություն չի տվել: Մյուս կողմից, կոմունիստների հեղինակության բարձրացումը անշուշտ հետեւանք է կյանքի ծանր դրամաններից հոգնած մարդկանց համեմատաբար բարվոք անցյալի հիշողությունների: ■

Ռուս սահմանապահները հեռանում են Ադրբեջանից

Ռուսաստանի սահմանապահ զորքերը կհեռանան Ադրբեջանից մինչեւ 1993 թ. օգոստոսի 1-ը: Այդ մասին դայմանավորվածություն է ձեռք բերվել Ռուսաստանի անվտանգության նախարար Վիկտոր Բարաննիկովի եւ Ադրբեջանի դեսական քարտուղար Հուսեյնովի միջեւ հոկտեմբերի 6-ին Մոսկվայում կայացած հանդիպման ժամանակ: Ըստ Ադրբեջանի տարածքում տեղակայված Ռուսաստանի սահմանապահ զորքերի ժամանակավոր կարգավիճակի եւ գործունեության մեխանիզմի մասին համաձայնագրի, անձնակազմի համալրումը անցումային փուլում տեղի կունենա խառը հիմունքներով, իսկ օպերատիվ ծառայողական գործունեության ղեկավարումը համատեղ կիրականացնեն Անդրկովկասի սահմանապահ զորքերի հրամանատարը եւ Ադրբեջանի դեսական սահմանի դահպանության կոմիտեի նախագահը: ■

Նավթամթերքը մանաթով

Հետայսու Ադրբեջանի հյուսիսային եւ արեւմտյան շրջաններում բենզինը եւ մյուս նավթամթերքները կվաճառվեն միայն մանաթով: Այդ որոշումը նպատակ ունի կասեցնել վառելանյութի հոսքը նախկին ԽՍՀՄ հանրապետություններ: Բանն այն է, որ բենզինը Ադրբեջանում կրկնակի էժան է, քան Ռուսաստանում կամ Վրաստանում: ■

Ուղղաթիռ նախագահի համար

Օրերս Կազանից Ադրբեջան կժամանի հատուկ դատվերով դատրաստված մի ուղղաթիռ: Այն նախատեսված է հանրապետության նախագահին տեղափոխելու համար: Ամբողջովին զրահապատ ուղղաթիռի սրահում կա բազմոց, սառնարան, օդափոխիչ, 9 փափուկ աթոռ: Այդ ուղղաթիռը նախագծվել է Դեռ Այազ Մութալիբովի օրոք եւ նախատեսված էր նրա համար: ■

Հետաքննության ընթացքն անբավարար է

Ադրբեջանի դատախազության կոլեգիան անբավարար ճանաչեց 1990 թ. հունվարի 20-ին տեղի ունեցած իրադարձությունների հետաքննության ընթացքը: Բացահայտվել եւ հարցաքննվել են մոտ 700 տուժածներ, անցկացվել է ավելի քան 20 փորձաքննություն: Հարցաքննվել են նաեւ ԽՍՀՄ եւ Ադրբեջանի մի շարք նախկին ղեկավարներ: Սակայն, չնայած նախկին Միության դատախազությունն եւ Ադրբեջանի Գերագույն խորհուրդ հղած բազմաթիվ հարցումներին, չեն ստացվել հետաքննության համար անհրաժեշտ բոլոր նյութերը: Կոլեգիան որոշել է բարձացնել քննչական խմբի կազմը եւ իր հսկողության տակ առնել նրա աշխատանքը: ■

Ադրբեջանի սահմանի գնդակոծման 10 դեպք

Օգոստոս եւ սեպտեմբեր ամիսների ընթացքում արձանագրվել է Իրանի կողմից Ադրբեջանի սահմանի գնդակոծման 10 դեպք: Այդ մասին «Խաբար-սերվիս» գործակալությանը հաղորդեցին հանրապետության դեսական սահմանի դաշտպանության կոմիտեի մամուլի եւ լրատվության բաժնում: Այդ գերատեսչության կարծիքով, այս ձեւով փորձվում է իրանցի մաքսանենգների անցումն Ադրբեջան: ■

Ստեփանակերտի բուհերում դադարեցվել են դարապմունքները

Ինչպես Ստեփանակերտից հաղորդեց «Նոյյան տապան»ի թղթակիցը, օդային ռմբակոծությունների հետեւանքով առաջացած զգալի ավերածությունների դատճառով, ժամանակավորապես դադարեցվել են դարապմունքները Ստեփանակերտի բուհերում: Երեւանի ճարտարագիտական համալսարանի եւ Վանաձորի մանկավարժական ինստիտուտի մասնաճյուղերում: ■

Սահմանամերձ շրջաններ

Հայրենիքը հարազատ, թե՞ խորթ մայր է

Տեր աստված, ինչեր ասես չտեսանք ու չլսեցինք, երբ առնչվեցինք փախստականների թեմային: Նաեւ, որ նրանց կողոպտում են ճանապարհին գրեթե մինչեւ վերջին թելը... յուրայինները, ջոկատների տղաները: Իմիջիայլոց, տեղնուտեղն ավելացրին, թե՝ իհարկե ոչ այն տղաները, որ առաջավոր գծում են: Իսկ սրանք, սատանան գիտի, անհայտ ենթակայության, դիակաղտությամբ զբաղվող «ինքնաբեռն», «ինքնուրույն» եւ էլի ինչ-որ «ինքնա» ջոկատներից են: Ասում են, թե օգտվելով անիշխանությունից, փախստականներից խլում են բառացիորեն ամեն ինչ, կորզում հսկայական գումարներ մեքենաներով (դարձյալ անհայտ է՝ թե ում) տեղափոխելու համար: Որ մարդիկ սովից մեռնում են ճանապարհին, որ ... մի խոսքով՝ ինչ ասես, որ չէին ասում: Չգիտեմ, դա կարելի՞ է ստուգել, կարելի՞ է դրան հավատալ: Բայց հնարավոր չէ այդպես եւ այդքան խաբել: Հավանաբար դրանում ճշմարտության ինչ-որ բաժին պետք է որ եղած լինի:

Մի փոքր վերեւում ասացի, թե չգիտեմ՝ կարելի՞ է դա ստուգել: Հավանաբար կարելի է: Եվ դա ավելի հեշտ կլիներ, երբ փախստականների խնդիրը գտնվեր պետության հովանու եւ համապատասխանաբար՝ հսկողության ներքո: Ես չեմ ուզում տվել զգայականությանը: Իրականում «փախստականներ» բառի մեջ արդեն ամփոփվում է մարդկային ողբերգությունն իր զգայական ողջ երանգավորմամբ: Իր բացարձակ ճշգրտությամբ ողբերգությունը չի կարող լինել մեծ կամ փոքր: Այն կա, եւ ամեն ինչ ամփոփվում է: Բայց դրա չափերը, խորությունը, այսինքն՝ ոչ թե զգացմունքային, այլ առարկայական մեծությունը կարելի է կարգավորել: Եվ որքան էլ ծիծաղելի լինի, կարգավորման մեխանիզմն արտահայտվում է չորս բառով՝ *«Փախստականների կարգավիճակի վերաբերյալ օրենք»:* Ահա եւ ողջ ճշմարտությունը: Առանց հույզերի: Առանց ավելորդ ֆիքսությունների: Իսկ որոնզի որեւէ մեկին չթվա, թե ես վերացական դատողություններ եմ անում, բերեմ այդ խնդրով ուղղակիորեն զբաղվող մարդու մենախոսությունը: Եվ այստեղ, խոսում է Գորիսի քաղխորհրդին կից փախստականների խնդիրների մասնագետ *Արմիկ Բակունցը:*

«Անցյալ տարի Բերդաձորի եւ այլ վայրերից փախստականների հետ գլուխ էինք հանում մեր ուժերով, թեեւ դա հեշտ չէր: Հասկանալի չէ, թե ինչպես կարելի է այս տարի եւս ամեն ինչ թողնել ինքնահոսի. շահումյանցիներին, մարտակերտցիներին, մի խոսքով՝ բոլորին, ովքեր հարկադրված են եղել թողնել Արցախը: Բացատրությունը հասարակ է: Անցյալ տարի շրջանը փոքր-փոքր մասակարարվում էր, բնակչությունն սատանում էր չափորոշված մթերքներ: Դրա, այսինքն մեր ամեն մի բնակչի հասանելիքը սահմանափակելու հաշվին մենք կարողանում էինք դահել փախստականներին: Կերակրել, հասկանո՞ւմ եք: Այժմ չափորոշված մթերքների բացակայության դայմաններում գործնականում անհնար է օգնել որեւէ մեկին: 3-4 ամիս առաջ միաժամանակ սնունդ էինք հավաքում սահմանամերձ գյուղերից: Այն հիմնականում նախատեսված էր կովող տղաների համար: Եվ մենք հարկադրված էինք դրանից ինչ-որ բան հատկացնել մեր շրջանում տեղավորված փախստականներին: Բայց այսօր արդեն դա էլ է անհնար: Դեռ ավելին, բոլոր հանրակացարանները, դդրոցները, ազատ տեղերը լցված են մարդկանցով: Հասկանո՞ւմ եք, մարդիկ գալիս են այստեղ առանց իրերի, առանց դրամի, բառացիորեն՝ առանց կողեկի: Գոնե դեսական մակարդակով միանգամայն նդաստներ տրվեին, գոնե սկզբի համար: Որքան հիշում եմ, ժամանակին այդդիսի օգնություն ցուցաբերվեց բերդաձորցիներին: Անձին հարյուր ռուբլի. մեծ բան չէ, բայց էլի ինչ-որ բան է: Ահա դուք ինձ հարցնում եք՝ փախստականները բողոքո՞ւմ են բալանից: Պիտի ասեմ, որ ես այդ մասին լսել եմ առավելագույնս ոչ նրանցից: Հավանաբար, այն դատճառով, որ նրանք ստիպված են մտածել ոչ՝ այնքան աղրած դժբախտությունների, որքան այսօրվա մասին, մտահոգվել, թե ինչով կերակրեն երեխաներին: Մեր ժողովուրդը ով ինչով կարողանում օգնում է: Ամեն հայի ճկուղում միշտ էլ դժբախտության մեջ ընկած մարդու հետ կիսելու ինչ-որ բան կգտնվի: Սակայն, հասկացեք, ճկուղներում եղածն անսպառ չէ: Հետո էլ, երբ նախորդ տարվա դահեստավորված արդեն սղաղվելու վրա է, իսկ նորի ժամանակը դեռ չի հասել, հարկ է լինում մտածել սեփական ընտանիքի մասին: Առավել եւս, որ ամեն տարի բոլորը դատրաստվում են տված ու ցուրտ ձմռանը: Մարդկանց կարելի է հասկանալ, ավելին, անկարելի է չհիանալ, որ այսդիսի դայմաններում էլ նրանք չեն դաժանանում, օգնում են նրանց, ում վիճակն ավելի ծանր է: Բայց մինչեւ ե՞րբ: Հավատացած եմ, որ այս խնդիրը հրատապ է ոչ միայն Գորիսում, որ նման իրադրություն է տիրում այլեւ բոլոր շրջաններում, որտեղ փախստականներ են ժամանում, այդ թվում նաեւ Երեւանում: Սակայն հավանաբար հասել է ժամանակը, որդեսզի կառավարությունն այդ խնդիրն իր ձեռքը վերցնի: Մեր ներքին բոլոր դատաշարերն սղաղվել են: Իշխանությունները ուղղակի դարտավոր են ինչ-որ որոշում կայացնել»:

«Ներքին բոլոր դատաշարերն սղաղված են»... Արմիկը մի փոքր դադար տվեց եւ կարծես ուժերը լարելով շարունակեց. «Հասկանո՞ւմ եք, այդ մարդկանց նայելը ոչ միայն ծանր, այլեւ ամոթալի է: Ամոթ է, որ ոչնչով չես կարող օգնել: Մի անգամ երեխայի հետ մի կին եկավ. «Լսել եմ, որ այստեղ օգնություն են տալիս»: Ես ինչդե՞ս կարող եմ նայել այդ երեխային ու դատասխանել, որ դրանք բնդամենը ասեկոսներ են: Փող տվեցի: Նա հոդարտրեն գլուխը վեր բարձրացրեց. «Ինձ էն գրդանից դետք չէ: Ինձ դետք է այն, ինչ օրենքով է հասնում»: Ի՞նչ կարող էի ասել նրան, որ այդդիսի օրենք չկա՞: Ինչդե՞ս: Սկսեցի համոզել, որ սրանք իմ վտղերը չեն, այլ դարզապես իմ գրդանում են: Որոշ ժամանակ անց մի ուրիշ կին եկավ: Նրան ստիպված էի «բացատրել», որ առայժմ նդաստ միայն երեխաներին են տալիս: Որքա՞ն կարող է այդդես շարունակվել»:

Արմիկը խնդրեց չգրել այս մասին. ամոթ է: Դատմեց միայն նրա համար, որ ես լավ դատկերացնեմ իրադրությունը:

Ինձ թվում է, ամոթը դա չէ, այլ բոլորովին այլ բան: Ես չգիտեմ, ինչ են մտածում մեր, թույլ տվեք ասել, օրենսդիրները եւ դաշտոնական մյուս այրերը, բայց մի՞թե նրանք չեն հասկանում, թե որքան ցավագին, ամոթալի է բայլել մուրալու համար դարզած ձեռքով, թե ավելի մեծ նվաստացում չկա: Ես տղամարդկանց մասին նույնիսկ չեմ խոսում, գիտեմ, որ ինձ անմիջապես կառարկեն.

«Երբ նա տղամարդ է, թող ոչ թե փախչի, այլ դաշտպանի իր հողը»: Համաձայն եմ, գեթ այնքանով, որքանով նույն «դաշտոնական անձինք» կհամոզեն՝ ինչդես, ինչով, ինչ դայմաններում դետք է այդ դաշտպանությունը լինի եւ ինչդես է այն իրականում կատարվում: Սակայն դա այլ խոսակցություն է:

Բայց անգամ համաձայնելով, որ տղամարդը չդետք է փախչի, այլ դաշտպանի իր տունը, իր հողը, հարկավոր է ընդունել՝ նա դետք է համոզված լինի, որ իր կինը մեկնած ձեռքով կաբինետից կաբինետ չի անցնի: Պետք է մարտնչի այն հույսով, որ արտագաղթ մարդիկ նրան մի քանի տասնյակ ռուբլի կտան, որդեսզի երեխաներին կերակրի:

Սա զգացմունքային մոտեցո՞ւմ է, թե դետական տարական հոգատարություն:

Վերջապես, որդեսզի մարդն իրեն քաղաքացի զգա, որի վրա որոշակի դարտականություններ են դրված, այդ թվում եւ հողի դաշտպանությունը, դետք է իմանա, դետք է երաշխիք ունենա, որ ինքը դաշտպանությունը, դետք է իմանա, դետք է երաշխիք ունենա, որ ինքը ինչ-որ վերացական միավոր չէ: Որ որդես մարդ, որդես քաղաքացի ինքը գտնվում է դետական հովանու ներքո:

Իրենց հարազատ օջախը հարկադրաբար թողած այդ փախստականները (որտեղից էլ լինեն նրանք) այժմ էլ եւ մինչ նշված դդրերգության վրա հասնելը հավանաբար ոչ դատահմամբ, ոչ հանուն գեղեցիկ խոսքի էին Հայաստանը մայր Հայրենիք անվանում: Եվ շարունակում են անվանել, չնայած ամեն ինչին...

Ուրեմն, թող այն նրանց համար խորթ մայր չդառնա:

ԻԴԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Գորիս-Երեւան

digitised by A.R.A.R.@

Կարո՞ղ են հայ կանայք միավորվել

Հայաստանում բացի ազատական կարգավիճակ ունեցող Կանանց հանրապետական խորհրդից, դարաբաղյան շարժման թեժ օրերին ստեղծվեց նաեւ «Հայ կանանց դաշինք» կազմակերպությունը, որը հարում էր Հայոց համազգային շարժմանը: Հասարակայնորեն ակտիվ կանայք բաժանվեցին ըստ կուսակցական պատկանելության՝ կոմունիստների ու ՀՀԴ-ականների, դրանից բխող հետեւանքներով եւ փոխադարձ մեղադրանքներով հանդերձ:

Ղարաբաղյան խնդրում Կանանց հանրապետական խորհրդի հայրենասիրական դիրքորոշումը Հայաստանի կանանց կազմակերպությունների ջանքերի միավորման անհրաժեշտություն առաջ բերեց, եւ այն ժամանակ լայն հասարակայնության շրջանում որպես ակտիվ բնապաշտպան ճանաչված Կարինե Դանիելյանը հանդես եկավ կանանց կազմակերպությունների համակարգիչ կենտրոնի ստեղծման գաղափարով: Սակայն մեկ-երկու հանդիպումից հետո այն դադարեց գոյություն ունենալ՝ չափազանց մեծ էր միմյանց նկատմամբ եղած անվստահությունը:

Ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, անջատ գործելու պատճառների թվում ամենավին էլ վերջին դերը չխաղացին հայ կանանց մոտ ի հայտ եկած պատվախնդրական նկրտումները՝ կարճ ժամանակում իրար հետեւից ստեղծվեցին ըստ էության միմյանց երկրորդող կանանց հասարակական կազմակերպություններ, որոնց քանակն այսօր արդեն անցնում է քսանից:

Ի դեպ, այս բիվը բավականին մոտ է Հայաստանում գրանցված հասարակական-քաղաքական կազմակերպությունների թվին եւ հայ կանանց «հավասարության» ասիճանի մասին նույնպես պերճախոս վկայություն է տալիս:

Նշենք նաեւ, որ կանանց կազմակերպությունների ճնշող մեծամասնությունը բարեգործական բնույթի է, եւ դրանք իրենց ջանքերի մեծ մասը նվիրում են Արցախի, սահմանամերձ շրջանների տուժածներին, ինչպես նաեւ որբերին, միայնակ ծերերին նյութական օգնություն ցույց տալու համար դրամական միջոցների հանգանակությանը:

Վերջին տարվա ընթացքում, երբ կանանց շրջանում զգալի կերպով մեծացել է գործազրկությունը, նրանց մի մասը նաեւ իրենց տուժած սեռակիցներին օգնելու նպատակով ձեռքի աշխատանքների ցուցահանդես-վաճառքներ է կազմակերպում: Թերեւս միակ կազմակերպությունը, որը կանանց, մայրերի ընդհանուր շահերի պաշտպանության հեռանկարային դիրք է գրավել, Հայաստանի Հանրապետության կանանց կոմիտեն է: Այն առայժմ իրեն հեռու պահելով քաղաքականությանը խառնվելու գայթակղությունից, կանանց վիճակի վատթարացման եւ դրանից բխող հասարակական հետեւանքների մասին տվյալներով ահազանգող փաստաթղթեր է ուղարկում իշխանության տարբեր մարմիններին, սակայն, ինչպես նշեց այդ կազմակերպության ղեկավար Նորա Հակոբյանը, շատ դեպքերում պատասխանի անգամ չեն արժանանում:



Նման, մեղմ ասած, արհամարհական վերաբերմունքի արժանանալով, պատահական չէ, որ հենց Հայաստանի կանանց կոմիտեն վերջերս հանդես եկավ հանրապետության բույլ սեռի ներկայացուցիչներին միավորող բոլոր կազմակերպություններին համախմբելու կոչով...

Եվ հայտնի չէ, թե դեպքերն ինչ ընթացք կստանային, եւ հայ կանանց կիսաջողվե՞ր երբեւէ համախմբվել, եթե ԱՄՆ-ի «Կանանց ազգային համաժողով» իր էությամբ ֆեմինիստական կազմակերպությունը հանդես չգար «Կանայք, առաջնությունը եւ ժողովրդավարությունը Հայաստանում» թեմայով առաջնորդ կանանց համահավաք կազմակերպելու նախաձեռնությամբ:

«Հրաշք» կատարվեց, որն անշուշտ իր բացատրությունն ունի միջազգային կարգերից դուրս մնացած լինելը, ամերիկուհիների հետ անմիջական շփման հնարավորությունը, հավանաբար նաեւ օտար, այս դեպքում արտասահմանցի հյուրերի մոտ «ընտանեկան» ներքին հակամարտությունները ցույց չտալու ցանկությունը հայ կանանց 14 կազմակերպություններին մի հարկի տակ հավաքեց:

Սեպտեմբերի 18-19-ը տեղի ունեցած հանրահավաքից հետո ԱՄՆ-ի Կանանց ազգային համաժողովի կոմիտեի փոխնախագահ Սառա Հաղբերդ իր տպավորությունների մասին հետեւյալն ասաց. *«Ես չէի կարծում, թե կանայք այսքան կարճ ժամկետում կարող են համախմբվել եւ քաղաքական խրթին խնդիրների շուրջ բնական կարծիք կազմակերպելով՝ ի վերջո համաձայնության գալ: Աշխատել եմ աշխարհի գրեթե բոլոր երկրների կանանց հետ եւ լավագույն դեպքում նրանցից նման արդյունքի հասնելու համար երկու տարի է պահանջվել: Իսկ այստեղ հավաքվել էին կանայք, որոնք մինչ այդ միմյանց չէին տեսել, բայց որոշեցին այստեղ միասին աշխատել եւ այն էլ ոչ թե կանանց կամ երեխաների, այլ պատերազմական վիճակի, բնաջնջանական, շտկայական տնտեսության անցնելու եւ ժողովրդավարության զարգացման հարցերի շրջանակներում»:*

Եվ իսկապես, եթե կողմնակի դիտողի աչքերով նայենք, տեղի ունեցած համաժողովի արդյունքները ավելի քան տպավորիչ են. ընդունվեց չորս փաստաթուղթ հանրահավաքի օրակարգ մտած «Պատերազմից խաղաղության անցման», «Հայաստանի բնաջնջանական իրավիճակի», «Ժողովրդի կենսապայմանների բարելավման» եւ «Ժողովրդասիրության հաստատման եւ ամրապնդման» հիմնահարցերի վերաբերյալ: Ավելին, չխվեարկվեց, բայց եւ առարկության չհանդիպեց Լյուդմիլա Հարությունյանի առաջարկը համաժողովին մասնակցող կանանց նոր միավորում ստեղծելու մասին:

Սակայն հետագա մեր հարցադրումն այնքան էլ լավատեսորեն չի տրամադրում: «Հայ կանանց դաշինք» կազմակերպության նախագահ Լենա Շառոյանը հայտարարեց. *«Համաժողովի մասին սկզբից մեկ օր առաջ են հայտնել: Ճիշտ է, մասնակցեցինք, եւ ես խոսք ունեցա, բայց մենք մեզ նոր միավորման՝ անդամ չենք համարում: Եվ ընդհանրապես, ոչ՝ մի բան չհասկացանք այդ հավաքից: Փաստաթղթերն էլ ընթերցվեցին եւ առանց քվեարկության ընդունված համարվեցին»:*

Մի փոքր այլ դիրքորոշում ուներ Հայաստանի Հանրապետության կանանց կոմիտեի նախագահ Նորա Հակոբյանը. *«Հավաքի մասին բառացիորեն երեք օր առաջ են տեղեկացել: Իհարկե լավ է, որ վերջապես միասին հավաքվելու եւ միմյանց լսելու հնարավորություն ստեղծվեց: Ցանկալի է, անշուշտ, որ միավորումը կայանա՝ այդ դեպքում իշխանություններն ստիպված կլինեն անդրադառնալ կանանց խնդիրներին: Ամեն ինչ կախված կլինի նրանից, թե ովքեր կմտնեն խառայմ միայն բանավոր համաձայնությամբ ստեղծված կազմակերպության մեջ»:*

Նման տրամադրությունների առկայության պայմաններում պարզ է, որ հանրապետությունում գործող կանանց կազմակերպությունների համախմբման եւ այս կամ այն նպատակների համար միասնական ճակատով հանդես գալու հեռանկարների մասին խոսելն առնվազն ինքնախաբեություն է:

Թերեւս այլ կարծիքի է «Հայ կանանց միջազգային ասոցիացիա-Հայաստան» կազմակերպության նախագահ Ռիտա Այվազովան: Նա ոչ միայն աշխատանք է տանում նմանատիպ նոր հավաքների անցկացման համար (գոնե տարին մեկ անգամ), այլեւ դրանց կազմակերպչական աշխատանքները կարգավորող գործադիր մարմնի ստեղծման հոգսերով է տարված: Նրա նպատակը Հայաստանում ֆեմինիստական շարժման իրական հիմքեր դնելն է, իսկ այդ գաղափարախոսությունն ամբողջ աշխարհում հսկայական ձգողական ուժ ունի:

ՀՈՎՍԵՓ ՊՈՂՈՍՅԱՆ

Երկաթուղին կաշխատի՞

ՀՀ կառավարության լրատվական ծառայության ղեկավար Վլ. Մանոյանի տեղեկության համաձայն, Ռուսաստանի միջնորդությամբ Մոսկվայում կայացած Հայաստանի եւ Ադրբեջանի երկաթգծի վարչությունների ղեկավարների բանակցությունների արդյունքում ստորագրվել է համաձայնագիր, ըստ որի հոկտեմբերի 12-ից կբացվեն Բաքու-Նախիջեւան-Երեւան եւ Բաքու-Թբիլիսի-Երեւան, իսկ հոկտեմբերի 13-ից՝ Բաքու-Աղստաֆա-Իջեւան գծերը:

Հարյուր տոկոսանոց երաշխիքներ տալ, թե այս անգամ շրջափակումը վերջնականապես կվերացվի, հնարավոր չէ: Որոշակի հույսեր է ներշնչում այս հարցում Ռուսաստանի շահագրգռվածությունը:

Եթե այս համաձայնությունն իրականացվի, բանակցությունների հաջորդ հարցը կլինի Ադրբեջանով անցնող գազատարի բացումը:

Դրա նշանակությունն այն է, որ թեեւ մեծացվում են Վրաստանի գազատարներով Հայաստան մտնող գազի ծավալները, սակայն տեխնիկական պատճառներով պահեստավորումը հնարավոր է միայն Ադրբեջանից հանրապետություն մտնող գազատարի բացման դեպքում: ■

10 միլիարդ բյուջեի դեֆիցիտը ծածկելու համար

Հայաստանի խորհրդարանը բյուջեի ծախսերը փակելու համար հանրապետական բանկին թույլ տվեց իրականացնել 10 միլիարդ ռուբլու վարկային էմիսիա:

Ինչպես «Սնարք»-ի թղթակցին հայտնեց ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերով խորհրդարանական մշտական հանձնաժողովի նախագահ Տիգրան Սարգսյանը, Գերագույն խորհրդի որոշումը հիմք կհանդիսանա Հայաստանի եւ Ռուսաստանի հանրապետական բանկերի միջեւ դրամական էմիսիայի իրականացման հարցերով բանակցություններ սկսելու համար: ■

Հացահատիկի գնման գները բարձր

Հայաստանի կառավարության որոշմամբ հոկտեմբերի 5-ից ցորենի գնման գինը հասցվել է 20 հազար ռուբլի մեկ տոննայի դիմաց, գարունը՝ 15 հազար ռուբլի: Սերմացուի համար կվճարվի հավելավճար 30 տոկոսի չափով: ■

Հայկական նոր ազգային դպրոց Շուշիում

Ինչպես Ստեփանակերտից հայտնեց «Նոյյան տապանի»-ի թղթակիցը, Շուշիում բացվել է ազգային դպրոց, որի նախաձեռնողը «Նիկոլ Աղբալյան» երիտասարդական ուսանողական միությունն է:

Դպրոցի 4-8-րդ դասարաններում սովորում են 42 աշակերտներ: Այստեղ խորացված ուսուցանվում են գրաբար, միջին հայերեն, աշխարհաբար, ինչպես նաեւ երեք օտար լեզու՝ ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն: Ուսուցչական կազմը բաղկացած է տեղական կադրերից: ■

Այսօր Տաշքենդում կբացվի միջազգային կինոփառատոն

Հոկտեմբերի 8-ին Տաշքենդում բացվում է Ասիայի, Աֆրիկայի եւ Լատինական Ամերիկայի երկրների 11-րդ կինոփառատոնը: Կազմկոմիտեի տվյալներով, կմասնակցեն 40 երկրներ, այդ թվում Հնդկաստանը, Չինաստանը, Ճապոնիան, Պակիստանը, Բանգլադեշը, Սիրիան, Մարոկկոն, Մեխիկան եւ Կոլումբիան:

Մրցույթին կմասնակցեն 15 գեղարվեստական կինոնկարներ: Վավերագրական ֆիլմեր այս անգամ չեն ցուցադրվի: Փառատոնի հովանավորները նրա անցկացմանը հատկացրել են 30 մլն. ռուբլի եւ 130 հազար դոլար: Փառատոնը կտեւի 7 օր: ■

Անկախ հանրապետություններում ռուսական բանակի դերը բնաղդատությունների տեղիք է տալիս

Այս վերնագրի տակ ամերիկյան «Քրիշչըն Սայենս Մոնիտոր» թերթն իր երեկվա համարում անդրադառնում է նախկին խորհրդային հանրապետություններում ռուսական բանակի հետգհետե ավելի ակտիվ դերի նկատմամբ եղած բնաղդատություններին, որոնք վերջերս հնչում են ոչ միայն հարավային հանրապետություններում, այլեւ նույնիսկ Ռուսաստանում:

«Ռուսական բանակի նոր դերը ոչ բոլորի կողմից է ողջունվում», գրում է թերթի մոսկովյան թղթակից եւ իր հոդվածներով «Ազգ»-ի ընթերցողներին ծանոթ լրագրող Դանիել Սնայդերը: «Ռուսական զինվորական ներգրավումների ընդլայնման եւ կայսերական տիպի կառավարման վերադարձի նկատմամբ մտավախություններ են արտահայտվում թե տարբեր հանրապետություններում եւ թե տանը», գրում է նա: Թվելով այն թեժ կետերը, ինչպես հայ-ադրբեջանական սահմանագիծը, Լեռնային Ղարաբաղը, Կուրգան-Տյուբեն, աֆղան-տաջիկական սահմանը եւ Վրաստանը, որոնցում ռուսական բանակն ստանձնել է դիտորդի կամ խաղաղարարի դեր, հոդվածագիրը շեշտում է այդ առթիվ գոյություն ունեցող դժգոհությունները: Որպես հաստատումն այդ մտավախությունների, հոդվածագիրը մեջբերում է Ռուսաստանի խորհրդարանի պաշտպանության եւ անվտանգության հարցերի հանձնաժողովի նախագահ Վալերի Շույկովի հայտարարությունը, որ եթե *«մեր զորքերը Ռուսաստանից դուրս պահելու պատճառներ կան, առայս դրանք պետք է համալրենք անհրաժեշտ բանակությամբ զինվորներով»*:

Հոդվածագիրը մեջբերում է նաեւ ԱՊՀ գլխավոր հրամանատար մարշալ Շապոշնիկովի «զգոնիչ» հայտարարությունը «ռուսական բանակի ավելի ագրեսիվ դերակատարության» մասին, որը լույս էր տեսել «Կրասնայա զվեզդա» թերթի սեպտեմբերի 30-ի համարում. *«Ներկայումս մենք դիմագրավում ենք հարավում իսլամական գործոնի հենքի վրա նոր միություն ստեղծելու ցանկությանը, որը ներառնում է ԱՊՀ-ի անդամ կենտրոնական-ասիական երկրները: Սրա հետեւանքով հյուսիս-հարավ առանցքի վրա կարող է երեւան գալ գլոբալ առճակատման մի նոր սահմանագիծ»*: ■

Մեր հիմնական խնդիրը «ուղեղների արտահոսքը» կանխելն է

Հայաստանի ադրանքահումքային բորսայի վարչության տնօրեն Ստանիսլավ Բաբայանը «Նոյյան տապանի» թղթակցին հայտնեց, որ մոտ ժամանակներս բորսան կկազմակերպի «Հայինտելեկսերվիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն: Ընկերության նախագահը Ֆադեյ Սարգսյանն է, գործադիր տնօրենը տեխնիկական գիտությունների թեկնածու Սամվել Անանյանը: Այդ կազմակերպության խնդիրը հայ տեխնիկական մտավորականության արտահոսքին տեղավորելն է, որոնց մի զգալի մասը արդյունաբերության աղքատացման հետեւանքով առանց աշխատանքի է մնացել: «Հայինտելեկսերվիս»-ը համաշխարհային գիտական կենտրոնների միջոցով կապվում է արտասահմանյան ֆիրմաների հետ (այդ կապը հիմնականում իրագործվում է սփյուռքի միջոցով): Նախատեսվում է ձեռնարկությունների, ծրագրերի ստեղծում: Այսպիսով, այս կազմակերպության նպատակը «ուղեղների արտահոսքը» դեղի արեւմուտք կանխելն է: Ամբողջատիրական վարչակարգի 70 տարիները նպաստել են ծանրակշիռ բանական պոտենցիալի ստեղծմանը:

Այդ հարցը լուծելու մասնավոր փորձեր են եղել, սակայն դրանք ցանկալի արդյունք չեն տվել: Այդ պատճառով բորսայում նպատակահարմար գտան այս կազմակերպության ստեղծումը, որը կզբաղվի այդ հարցերի կենտրոնացմամբ: ■



digitised by A.R.A.R.@

ԳՈՒՄԱՐԵԼԻՆԵՐԻ ՏԵՂԵՐԸ ՓՈԽԵԼԻՍ...

ՏԻԳՐԱՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
«Հայաստան-Միջին Արևելք» վերլուծական կենտրոն

Հայաստանի ներկա վարչակարգը փայլուն կատարեց մինչև այժմ իրեն հատկացված դերը. բայց այսօր արդեն «խաղաղության աղավնուն» պետք է փոխարինելու գա հոխորտ հայրենասերը, փոքրիկ ժողովրդի դատերազմի ասվածը՝ Մարսը, այսինքն բռնապետի դասական տարբերակը:

Այդ նոր դերակատարումից խուսափելու համար Հայաստանը պետք է նախաձեռնություն ցուցաբերի:

Ամիսներ առաջ մեր հնչեցրած ահազանգը, թե Հայաստանը գլորվում է երրորդ աշխարհի աստիճանակարգի ստորին աստիճաններին, արձագանք չունեցավ, բացառությամբ «Հայաստանի Հանրապետության» թղթակիցներից մեկի ոգեունչ հոդվածի, ուր մեր այն միտքը, թե արմատական քայլեր չձեռնարկելու դեպքում *«հայկական նոր պետականությունն անցումային փուլ կդառնա մի գաղութատիրությունից դեպի մյուսը»*, իսկ *«լավագույն վերջաբանը կլինի ՄԱԿ-ի երկրնգույն սաղավարտների ներկայությունը երկրի տարածքում կամ նրա սահմաններին»* (այսօր իսկ մեր քաղաքականությունն այդ նպատակին է ուղղված), վիրավորել էր մեր հարգարժան գրչակցի լավագույն զգացմունքները, որ նա տածում է նորաստեղծ պետականության եւ նրա վարչակարգի նկատմամբ: Նա, ուրիշ շատերի նման, չէր էլ փորձել հասկանալ, որ «Այսպես պետականություն չի կայանում» վերնագիրը ոչ թե պարզունակ չարախնդություն էր, այլ օբյեկտիվ իրականության վրա հիմնված ցավալի ախտորոշում: Բայց, առաջնորդվելով «ով անցյալը վերհիշի, նրա աչքը դուրս գա» իմաստությամբ, թողնենք բոլորիս արտահայտած մտքերն ու դատողական սկզբունքները մեր սեփական խղճի եւ դատության դատին:

Առավել ցավալին այն է, որ կեղծ եւ անսկզբունք, դրանով իսկ խիստ արատավոր հավատարմության վրա կառուցված պետականության հիմքերը անվերականգնելի ճեղքվածքներ են տալիս, տանելով երկիրն ու ժողովրդին նոր փորձություններին: Հայաստանը հետեւողականորեն վերածեցին քաղաքական եւ տնտեսական անլուծելի հիմնահարցերի ծանրության տակ օրեցօր ավելի անհույս դեգերող երկրի, չարիքների արմատը որոնելով ընդդիմության խարդավանքների եւ իշխանությունների շուրջը համախմբվածության բացակայության մեջ: Իրականում «անկախ ու հզոր Հայաստանի» իշխանությունների շուրջը այսպես կոչված «համազգային համախմբվածության» անիրական լինելը բխում է ոչ թե ընդդիմությունից կամ անկուսակցական ընդդիմախոսների մեծամասնակ բանակից, այլ հենց կուրորեն ենթարկվող ու սկզբունքներից զուրկ վարչակարգից:

Վարչակարգի հակառակորդ-բանին հենց ինքը վարչակարգն է՝ իր ուռճացած, չգործող, բայց իշխանատենչ աղարատով, որի անձեռնհաս ու անարդյունավետ աշխատանքը ներսից քայքայում եւ կազմալուծում է իշխանության համակարգը, տնտեսությունը, մթագնելով հասարակ մարդկանց առաջ այն էլ տխուր առօրյան: Եւ այս տարական անկարգությանը, որը ցայսօր պետականության կառուցում է անվանվում, վերջ են տալու ոչ թե ընդդիմությունը, ոչ թե սոցիալական ադեսի եզրագծին հասած ժողովրդի ընդվզումը, այլ վարչակարգի ներսում ձեւավորված եւ այժմ վերընթաց շարժում առնող այն ուժերը, որոնք իրենց արտնյալ դիրքերը կորցնելու եւ դատապարտության ենթարկվելու ահից փորձելու են «երկաթյա բռունցքի» միջոցով կարգ ու կանոն հաստատել երկրում, դրանով իսկ դատապարտել սեփական իշխանությունը:

Սա երրորդ աշխարհում ներքին, աղարատային հեղաշրջման դարգունակ տարբերակ է, որը փորձում են դարտադրել նաեւ Հայաստանին: Պատրաստ են անգամ անհատն ու քաղաքական ուժը, որոնք յուրային են ինչպես այսօրվա իշխող ընտրախավի, այնպես էլ ընդդիմության համար: Առաջին հայացքից թվում է, թե ոչ մի էական փոփոխություն չի լինի, սակայն սա այն դեպքն է, երբ գումարելիների տեղերը փոխելիս գումարը փոխվելու է:

Այո, նա հաղթանակած հեղափոխության ընտրախավի բաղկացուցիչ մասն է, նա եւս կանգնած է եղել ներկայիս ներքին եւ արտաքին քաղաքականության ձեւավորման ակունքներում, բայց առժամանակ ընդդիմության շարքերում, ժամանակ եւ հնարավորություն ունեցավ սահմանազատվելու վարվող քաղաքականությունից եւ այն մարմնավորող քաղաքական ուժից: Եւ երբ հանրապետությունում կհաստատվեր իշխ ժամը, արդ «ազգային միասնականությունը» չխախտելու եւ հնարավոր դիմակայությունից խուսափելու համար (դատերազմող երկիրը չի կարող նման շռայլություն թույլ տալ) նա կընտրվի իբրեւ փոխզիջողականության լավագույն տարբերակ: Թեեւ, ինքնին հասկանալի է, թե ում մասին է խոսքը, սակայն սխալ է անհատականացնել այս խնդիրը, քանզի գործադրվող բանաձեւի մեջ կարող է դրվել ցանկացած այլ անհատ, եւ օբյեկտիվ իրականությունը դրանից դույզն իսկ չի փոխվի:

Ի՞նչ նպատակով են փոխվելու գումարելիների տեղերը: Կարծում ենք, որ դա կաղված է այն նոր ռազմաքաղաքական փուլի հետ, ուր մուտք են գործում Անդրկովկասը մասնավորապես եւ Միջին Արեւելքն ու նախկին ԽՍՀՄ տարածքները ընդհանուր վերցրած: Հայաստանի ներկա վարչակարգը փայլուն կատարեց իրեն հատկացված դերը 1990-92թթ. ժամանակահատվածում, բայց այսօր արդեն «խաղաղության աղավնուն» պետք է փոխարինելու գա հոխորտ հայրենասերը, փոքրիկ ժողովրդի դատերազմի ասվածը՝ Մարսը, այսինքն բռնապետի դասական տարբերակը: Հայաստանից դահանջվում է արմատական բեկում մտցնել իր անմիջական հարեւանների, ԼՂՀ-ի խնդրի եւ ազգային հարցերի նկատմամբ մոտեցումներում, իսկ ներկայիս առաջին դեմքերն այդ դերին չեն համաձայնվում:

Ընդ որում, աղազգային համարվող ուժերի փոխարինումը «ազգային նպատակներ հետապնդող» նոր քաղաքական դեմքերով կարող է մեծ ոգեւորությամբ ընդունվել եւ հանրապետությունում, եւ սփյուռքում: Առերեւույթ, ժամանակավոր հաջողություններ մոլորության մեջ կգցեն քաղաքական ու ազգային միտքը, եւ խիստ երկար ժամանակ ու ցավագին ընթացք կպահանջվի, որպեսզի կրկին գիտակցվի, որ հայրենիքի եւ ազգային խնդիրների դատապանության այս տարբերակը ելս մերը չէր եւ բնականաբար մեր շահերի ծառայությանը չէր ուղղված: Վատն այն է, որ որոշ ազդեցիկ քաղաքական կուսակցություններ եւ հազարավոր մարդիկ կներգրավվեն ազգային երանգ ընդունած այս տեղաշարժության մեջ՝ հայանպաստ արդյունքների մեծ ակնկալիքով:

Թե ինչ կմնա Հայաստանից, երբ կցրվի այս ցնորքը ելս, դժվար չէ դատկերացնել, մանավանդ որ իշխանության փոփոխության իրս ժամի հասունացման ճանապարհին կձեռնարկվեն ամենանենգ միջոցներ, եւ իրավիճակը հանրապետությունում ու ԼՂՀ-ում կհասցվի ծայրահեղ վատ աստիճանի:

Ինչպե՞ս շրջանցել արտաքին ուժերի կողմից թելադրվող քաղաքական զարգացման հերթական տարբերակը եւ նոր իրավիճակում մեզանից դահանջվող գործելակերպը ստանձնել ոչ թե կուրորեն, չկարողանալով եւ չցանկանալով գիտակցել խաղի կանոնները ու նպատակները, այլ սրամիտ գիտակցությամբ, դահդանելով մեծ խաղի շրջանակներում սեփական շահերին հետամուտ լինելու հնարավորությունը: Քանի որ ժողովրդավարության վատ թե լավ, բայց կայուն նվազագույնի վրա հիմնված եւ իր արտաքին խնդիրներին խաղաղ հանգուցալուծում փնտրող այսօրվա երկրին պետք է փոխարինելու գա «ուժեղ ձեռքով» ղեկավարվող, ավտորիտար իշխանությամբ եւ արտաքին խնդիրներում կարծր դիրքորոշում ցուցաբերող վաղվա երկիրը, առա իրս ժամին հարվածի առաջին թիրախը դառնալու է հանրապետության նախագահը, որի անձի վրա էլ բարդվելու են «աղազգային քաղաքականության» բոլոր մեղքերը: Եթե նախագահը մինչեւ վերջին ոռդեն հավատարիմ է մնալու իր վարչակարգին եւ աղարատին, քանզի դա նրա միակ հենարանն է, առա վարչակարգի ու աղարատի խնդիրն է լինելու ճիշտ ժամանակին, բոլորից առաջ ընկնելով, հրաժարվել նախագահից, որպեսզի նրան փոխարինելու եկող առաջնորդը բավարարվի կոսմետիկական փոփոխություններով, ձեռնդատ մնալով վարչակարգն ու աղարատը փոխելու գործողություններից: Դա բոլոր ժամանակներում աղարատների առանցքային սկզբունքն է եղել՝ առաջին դեմքերի փոփոխության դեպքում անսասան դահել սեփական իշխանությունը:

Ուստի, անկախ նրանից, թե ինչպես ենք վերաբերում նախագահին, նրա կարգավիճակը պետք է դատասխանության տակ վերցվի ընդդիմության եւ մյուս քաղաքական ուժերի կողմից, քանզի նրան փոխարինելու եկող ավտորիտար իշխանության ակնկալելիք վնասներն իրենց ծավալներով գերազանցելու են անգամ ամենահամարձակ կանխատեսումները: Ինչպես արդեն նշեցինք, խնդիրն անչափ դժվարանում է այն դատճառով, որ նախագահը մինչեւ վերջին ոռդեն շարունակելու է կառչած մնալ վարչակարգից եւ դատասդանելու է աղարատը, չնկատելով կամ չուզենալով նկատել, որ աղարատն իր հերթին (ներառյալ խորհրդական-օգնականները) արդեն վաղուց տեղի ունեցածի ողջ դատասխանատվությունը բարդում է նախագահի վրա, ձգտելով առավելագույնս «մաքուր» մնալ, առաջին դեմքի փոփոխությունից հետո իշխանության լծակները դահդանելու համար:

Ուրեմն, ինչպե՞ս կանխել աղարատային հեղաշրջումը եւ արտաքին քաղաքականության նոր իրողություններին մեջ ներգրավվել, խուսափելով ցավագին ընթացքից: Դրա համար անհրաժեշտ է եւ ներքին, եւ արտաքին քաղաքականությունում առաջնորդվել կանխարգելման սկզբունքով: Մեզանից դահանջվում է, որ հանրապետության ներսում իշխանության զան նոր ուժեր, ովքեր կարող են կանգնել բազմակողմանի անկումը (անկում աղրող, թուլացող Հայաստանը չի կարող կատարել արտաքին աշխարհի նկատմամբ դահանջվող դերը), վերջ տալ քաոսին եւ վերածել երկիրը ամուր ռազմաքաղաքական հենարանի: Սրա իրականացման համար արտաքին ուժը նախընտրում է բացարձակ ավտորիտար վարչակարգի հաստատումը, որը հեռանկարում մեզ համար կործանարար է: Ուստի, մենք դետք է աղացուցենք, որ հանրապետությունը կարող է լուծել առաջադրված խնդիրները, դանդանելով ժողովրդավարական համակարգը: Նախագահը միայնակ դա անել չի կարող, իսկ աղարատը հակաժողովրդավարական հեղաշրջման գործիքն է:

Լավագույն եւ փաստորեն միակ ճանապարհը իշխանության ձեւի փոփոխությունն է: Պատասդանելով եւ դահդանելով նախագահին ու նրա կարգավիճակը, անցնել վարչադետական կառավարման եղանակին (Իտալիա, Գերմանիա, Իսրայել եւ այլն): Անցկացնել խորհրդարանի նոր, ազատ ընտրություններ, իրավունք վերադահելով հաղթանակած կուսակցությանը կամ կոալիցիային կազմելու կառավարություն եւ առաջադրելու վարչադետ, որը եւ կկառավարի հանրապետությունը, իբրեւ առաջին դեմք ներկայացնելով Հայաստանը միջազգային հանրության շրջանակներում: Դրանով իսկ մենք ինքներս կիրականացնենք իշխանության փոփոխությունը, կգա արմատական վերափոխությունների ընդունակ նոր ուժը, որը եւ կտանի Հայաստանը այն ուղով, որը մեզանից դահանջվում է (եւ որը հարազատ է մեզ):

Այսդիսով, Հայաստանում իշխանության փոփոխության իրս ժամի հասունացման համար կարիք չի լինի հարդ արյուն թափել Լեռնային Ղարաբաղում, տարածքային կամ այլ բնույթի կորուստներ կրել, կրիտիկական կետին հասցնել ժողովրդի սոցիալական վիճակը եւ այլն: Այսինքն, մենք կխուսափենք այն ամենից, որը սովորաբար արվում է որեւէ երկրում իշխանության փոփոխություն իրականացնելու համար, եւ գումարած դրան, կշահենք ժողովրդավարության դահդանումը, իր բոլոր դրական հեռանկարներով հանդերձ: Բացի դա, այն տարաբնույթ աջակցությունը, որը ստանալու է նոր դերը ստանձնող Հայաստանը, ոչ թե կվատնվի իշխանության փոփոխության փուլի ավերակները վերականգնելու վրա, այլ կծառայի դահդանված նվազագույնի զարգացմանը:

Իշխանության հարցի նման հանգուցալուծման դեպքում մենք կդահդանենք ազգընտիր նախագահի կարգավիճակը եւ կկանխենք աղագայի համար խիստ վտանգավոր աղարատային-արքունական հեղաշրջումների նախադեդը: Անչափ բարդ իրավիճակից դրական արդյունքով դուրս կգան եւ նախագահը, եւ ժողովուրդը, եւ հանրապետությունը: Միակ տուժող կողմը կլինի աղարատի առավել ռեակցիոն հատվածը, որը հույս ունի ավտորիտար վարչակարգի հաստատման միջոցով էլ ավելի ընդլայնել եւ անվերահսկելի դարձնել իր իշխանությունը, վերջնականապես ազատվել անգամ ժողովրդավարական նվազագույնով դարտադրվող բարոյական եւ այլ բնույթի սահմանափակումներից:

Համանման կանխարգելման մի տարբերակ էլ պետք է դրդեցրել արտաքին քաղաքականության դորտում: Այս առումով հանրապետության արտգործնախարարի վերջերս Ստամբուլում եւ Նյու Յորքում արտահայտած տեսակետների որոշ երանգները դարզապես մարգարեական են դիտվում (ամենեւին դատահական չէ, որ դշանք առավել մերժողական գնահատականի են արժանանում հենց աղարատի ռեակցիոն շրջանակներում, որոնք հնարեն օգտագործում են նախագահի օբյեկտիվ հակվածությունը դեպի իրենց):

Մենք չդետք է աղատենք, մինչեւ որ առանձին երկրների հակահայկական քայլերով, ցավագին հարվածներով եւ մեծ կորուստներով մեզ դարտադրվի նոր քաղաքական դիրքորոշումը, այլ անհրաժեշտ է զարգացում տալ արտգործնախարարի կանխարգելիչ դիվանագիտական քայլերին եւ օբյեկտիվ իրականությամբ դարտադրված նոր դերն ստանձնելով նախաձեռնությունը դահել մեր ձեռքում: Եթե արտաքին հարաբերություններում եւս, Հայաստանը հնամաքայլ շարժվի ներկայացվող դահանջներին, առա ոչ միայն կխուսափի կորուստներից, այլեւ ձեռք կբերի շոշափելի շահաբաժիններ:

Հանրապետության ներսում ավտորիտարիզմի հաստատման հնարավորությունը բացառելու համար խիստ կարեւոր է նաեւ վարչադետական կառավարման եղանակին հնչ մեկտեղ իրականացնել տարածքների ֆեդերալիզացիան: Չանգեզուրում եւ աղեսի զոնում, ինչի մասին արդեն բազմիցս խոսվել է:

Իսկ արտաքին հարաբերություններում նոր քաղաքական դերի հավաստիացումն ամրացնելու համար օր առաջ դետք է աշխատանքներ սկսել ԱՊՀ լարվածության գոտիներից հայ ազգաբնակչության ներհոսքը Հայաստան եւ ԼՂՀ կազմակերդված իրականացնելու ուղղությամբ: Չի կարելի սդասել, մինչեւ որ նույնը տեղի ունենա ուշացումով, մեր կամքից անկախ, երբ մեր հայրենակիցները զրկված կլինեն ունեցվածքից եւ կարողություններից, որովհետեւ այս դեդքում նրանց ներհոսքը հանրապետություն կարող է կործանարար հետեւանքներ ունենալ:

Այսդիսով, այն, ինչ կանխորոշված է՝ Հայաստանում նոր իշխանության հաստատումը եւ արտաքին քաղաքականության դորտում դիրքորոշումների արմատական փոփոխությունը, իրականացվելու են անկախ մեր կամքից եւ ցանկությունից, բայց մենք դարտավոր ենք առավելագույնս վերահսկել այդ տեղաշարժերը եւ իրադարձությունների զարգացումը դնել դետականության ու ազգային խնդիրների համար առավել նդաստավոր հունի մեջ, դատասդանելով ժողովրդին, երկիրը, ժողովրդավարությունը եւ նախագահին: ■

digitised by A.R.A.R.@

«Եթե»-ներ դեռ կան

Ամեն օր կարդալով այլեւայլ հարցերի նվիրված հրապարակումներ, քաղաքական վերլուծականներ, կամ ձայն բարձրաձայնող հանդիպումների հոդված-մարտահրավերներ, մտածում ես. ի՞նչն է դրդում դրանց հեղինակներին նորից ու նորից գրիչ վերցնել: Չէ՞ որ նախորդ եւ ոչ մի հոդվածի նրանք դատապարտան չեն ստացել: Նրանց նկատած որեւէ շեղումը կամ հանցագործ միտումը չի ուղղվում, կանխարգելվում:

Ժողովուրդն ու իշխանությունները հավասարապես մեկուսացել են իրավիճակից: Զգայական ու քաղաքացիական ոլորտի մղումները ճնշված են մինչեւ կենդանականի եւ նախնադարյանի աստիճան: Արդե՞ք այս պայմաններում որեւէ միտք, տեսակետ կամ զգացումներ հրապարակ հանել:

Միտքս բերադրում է, թե անիմաստ գործ է, միեւնույն է, արդյունքը զերո է լինելու, ինչպես մնացած բոլոր դեպքերում է եղել, սակայն մի ուրիշ «ես» էլ կա իմ մեջ՝ կողմնակի հանդիսատեսի «ես»ը, որն իր հիշողության ամբարում համբերատար կուտակել է 4 տարվա տեսիլքներ եւ գոչիս բերադրում է գրի առնելու մտքերս, հարց տալու, թե՝ հայ մարդիկ, որ առաջներում բնութագրվում էին որպես տասնավարտ կամ բուհավարտ, արհեստավոր կամ բեկնաձու, բժիշկ կամ ակադեմիկոս, խելոք, հնարամիտ, աշխատասեր եւ այլնիսկ հանճարեղ, այդ ինչպես եղավ, որ 2-3 տարում բոլորս դարձանք մի կտոր հաց մուրացող, գորշ ամբոխ, հայացքը հառած դեպի այս կամ այն կեղծ հույսը: Այդ ինչպես եղավ, որ ինքներս կործանեցինք մեր տնտեսությունը եւ հիմա էլ գլխիկոր լսում ենք, թե ինչպես կառավարությունը հաց ու հոսանք է մուրում Թուրքիայից, ընդունում աստվածայանով «անհանգստացած» բարքերի կամ վրացիների, բացատրություններ տալիս ու հանգստացնում, փոխանակ ասելու՝ մի դուրս կորեք էստեղից, իմն է, կուզեմ կխանդեմ, կուզեմ կաշխատեցնեմ:

Անկենդան լռությամբ ու մոլորյալ կեցվածքով մենք ներկա ենք այս ամենին, փաստորեն ինքնակամ զրկված ձայնի իրավունքից: Կարծես գտնվում ենք մի զարհուրելի կեղտի ու լուսանցի մեջ, որից ոչ ելք կա, ոչ փրկություն:

Ճգտորեն դարձել ենք Հայաստանում առկա ուրիշների շրջանակին եւ հեռահար-շահերը, հասել ենք «վերջին մարդու նկարագրին» եւ նույնիսկ «գենային մեր առանձնահատկություններին», բայց «ինչն է հետաքրքրական (ինչպես կասեր կատակասերը), սիրելի պարոնայք-ժողովուրդ՝ արդյունքն է զերո:

Բազմաթիվ սկզբունքային հոդվածների հեղինակներ դարձվում է ընդամենը գլուխիատորներ են, որոնք ժողովրդի եւ իշխանությունների առջեւ մատնչում են ինչ-որ աներեւույթ հակառակորդների դեմ: Նրանց ասածը լսող չկա:

Քաղաքական վերլուծությունները հիմնականում ճիշտ են, Գոբլի կամ Հոբլի ծրագիրն էլ առկա է: Այս ամենը ճիշտ է, դարձ ու հայտնի դեռ դարասկզբից, առա 1988 թվի սկզբից, հետո էլ ամեն օր ու ամեն ժամ: Բայց հարցն այն է, թե այս ճշմարտությունները ո՞ւմ են դեմ: Պարզվում է բոլորին էլ դեմ են, բացի մեզանից: Այլապես Գոբլի ծրագիրը, եթե գրվեր էլ, առա նրա գրասեղանից այն կողմ այդ թղթի կտորը չդեմ է ճամփորդեր: Բայց այսօր այն մեր մեջ է, մենք էլ գուշակում ենք՝ ո՞նց կլինի:

Նախիրը, ինչպես գիտենք, բացվեց ոչ թե տնտեսական-ռազմավարական անհրաժեշտությունից դրդված, այլ այն բանից հետո, երբ ժողովուրդը ճարահատ խնդրեց այդ մասին իշխանություններին: Աստվածայանը կբացվի (եթե այն վերջնականապես կազմաքանդված չէ) այնժամ, երբ ժողովուրդը ծնկաչոք կխնդրի այդ մասին:

Եթե դեպքական քաղաքականությունը կառուցվելու է ժողովրդին ծնկի բերելու եւ մինչեւ իրենց մակարդակը կռացնելու շնորհիվ միայն, առա դրա արդյունքում ոչ թե դեպություն է ծնվելու, այլ անիշխան մի տարածք՝ իր վիճակով նման այսօրվա Սոմալիին:

Եթե միայն ֆիզիոլոգիական ազդակներն են խրան հանդիսանալու որոշում ընդունելու համար, առա վայ այդ դեպությանը:

Մինչեւ այսօր էլ մենք մեր սխալները չենք ընդունել եւ եզրակացություններ չենք արել: Միշտ ուշացումով որոշումներ ենք ընդունում արդեն ծայրահեղ վատթար իրավիճակները շտկելու ուղղությամբ (օրինակ, բանակի ստեղծումը) եւ տպավորություն է ստեղծվում, թե գործը բեռ ոչ արդյունավետ, բայց կատարվում է, եւ իշխանություններին դեմ չէ խիստ մեղադրել: Իրականում երեւի թե միտումը հենց դա է՝ գործը ձախողել ոչ թե նրանից ամբողջությամբ հրաժարվելով, այլ ձգձգելով, ուշացնելով հասնել նույն արդյունքին, խուսափելով դատապարտվությունից: Նոպատակային է այս ամենը, դարձադրված, թե ոչ դրոֆեսիոնալիզմի արդյունք, կողարզվի հետագայում, բայց որ առկա է մեր գործին խաթարող մի մեխանիզմ, դա, կարծում եմ, անառարկելի է:

Մենք երազանքներ ունենք, թե կգա մի նոր Սասունցի Դավիթ, մեզ բոլորիս իր բազկի ուժով կփրկի, կամ էլ մի ուրիշ Ռոի կգա այլ աշխարհներից, մեզ բոլորիս կհավաքի կտանի իր երկիրը, ասենք Տասմանիա ու այն կնվիրի մեզ: Կամ էլ թե չէ Ադրբեջանը ճանապարհները կբացի (մեր բանակցությունների դահանջից հետո) եւ ռուսական յուղն ու բրինձը կգան ու մեր չաշխատող երկիրը կլիացնեն:

Այս դարաշրջանում իրական տարբերակ է դարձել արտագաղթը եւ այն դժվար մերժելի է, քանի որ ամենքս էլ արդեն սկսել ենք փշաքաղվել ահագնացող շուրջբոլորյա աղամարդկայնացումից:

Ինչպես դարզ է արդեն, շատ բան կարելի է գրել: Այդ գրվելիքի մեծագույն մասը կանխավ հայտնի է բոլորիս: Ենթադրենք, թե այդ ամենն արդեն գրված է, դու էլ, հարգելի ընթերցող, արդեն կարդացել ես: Հետո՞, «հետո»ն է կարեւորը, հետո ի՞նչ, հետո ոչինչ:

Ահա այս «ոչինչ»ն է հիմնահարցը:

Մենք այս վիճակում ենք հենց այդ «ոչնչի» դատճառով: Երկրաշարժ տեսանք, ոչինչ: Ղարաբաղյան հարցի հետ կապված էլ ինչ ասես չտեսանք՝ ոչինչ, հանրապետության նախագահն ու դատկառելի կուսակցությունը միմյանց «վկայականներ» մատուցեցին՝ ոչինչ:

Այս «ոչինչները» սարսափելի են: Երբ մտովի ինքներս մեզ հարց տանք, թե արդյոք անգլիացին, ֆրանսիացին, ռուսը կամ բուրքը նույն կերպ կվարվեի՞ն մեր դարաշրջանում, առա մեծամասնությունը կդատասխանի այո:

Այս դիրքորոշումն էլ հիմնահարց է:

Այս «այո»ն կեղծիք է, հիմնահարցի ասիճան բարձրացված կեղծիք: Ոչ մի ինքնիշխան ազգ չի տա այդ դատասխանը: Հենց մեր օրերի համար այս թեզի աղացույցները բազմաթիվ են: Դրանք են ֆոլկլենդյան ռազմարշավը (անգլիացիներ), տարբեր որոշումներում միջուկային զենքերի փորձարկումների սահմանափակմանը չմասնակցելը (ֆրանսիացիք), Իրաք-Քուվեյթ կոնֆլիկտը (ամերիկացիներ), Ղարաբաղի հարցը (ադրբեջանցիներ, բուրքեր), Օսեթիայի, Աբխազիայի (վրացիներ), Կուրիլյան կղզիների հարցը (ճապոնացիներ) եւ այլն:

Ազգային խեղճությունն ու անտարբերությունը մեր մեջ սերմանվել են վաղուց ի վեր: Այս խեղաթյուրված ինքնագիտակցությունը ներարկվել է մեր խելոք բնամիների ջանքերով եւ մենք այնքան խորն ենք կուլ տվել այդ խայծը, որ Նախիջեւանից հրաժարվել ենք վերջնականապես, Ղարաբաղից հրաժարվում ենք օրեցօր եւ հոգեբանորեն նախապատրաստվում ենք Զանգեզուրին: Մենք մեջբերումներ ենք կատարում տարբեր հյուրերի շրթունքներ խոսքերից, թե ինչ հերոս ենք, որ դիմանում ենք այս ստրացումներին եւ ավելի ու ավելի բաղվում այս նվաստացումների մեջ:

Սթափվելու համար մենք դեմ է հակադարձ գտնենք վերը նշված «ոչինչներին»: Վերջին 3-4 տարիների մեր արարքները մեծագույն չարիք էին մեզ համար: Եթե մեր տնտեսությունը մեր իսկ ձեռքով կազմաքանդված չլիներ, կարելի էր վերականգնման հույսեր ունենալ:

Տեսական հույսեր այսօր էլ կան, բայց դրանք օրեցօր մարում են մեր խորխոս իշխանավորների գործերի հետեւանքով: Զանգեզուրի դեմ տարածք ունեցող Հայաստանն այսօր մուրացկանի ձեռք է մեկնել այդ տարածքին հավակնողին: Համաշխարհային քաղաքականության խաչմերուկներից է-այսօր Հայաստանը եւ մենք դժգոհում ենք դրանից: Պետք է այդ խաչմերուկի տերը դառնալ, իսկ մենք փախչում ենք այնտեղից, ամեն մի անցորդի ոտնաձայներից դողալով: Խաչմերուկները մեծ քաղաքականություն են դահանջում: Մեծ քաղաքականությունը արի սիրտ, առ միտք ու անկոտրում կամք է դահանջում: Այս ամենը մենք ազգովին չունենք: Հաս ու կենս ունեցողները կամ Արցախում են, կամ զոհվել են, կամ կզոհվեն մոտ առագայում, եթե գործերն այսդես շարունակվեն:

Ինչպե՞ս, կրկնենք հարցը՝ կա՞ն արդյոք ելքեր:

Ես հակված եմ մտածելու, որ գործնականում արդեն չկան, բայց կան մի քանի «եթե»ներ, որոնք երեւի թե կօգնեն մեզ օբյեկտից սուբյեկտի վերափոխվելու: Շատ հնարավոր է, որ հայ ազգի համար ես գոյություն ունի ֆիզիոլոգիական անհանդուրժելիության ինչ-որ աստիճան, որից այն կողմ նա այլեւս «Լրաբեր» չի նայի:

Շատ հնարավոր է, որ այդ իրական աստիճանը նախապես հաստատվել է մեր «բարեկամների» կողմից եւ նրանք կթելադրեն մեր իշխանություններին չհասցնել մեզ այդ մակարդակին: Այս դարաշրջանում եթե մենք մի փոքր հնարամտություն ցուցաբերենք եւ արհեստականորեն ավելի բարձր աստիճան դրսեւորենք, առա ինչ-որ բան կարելի կլինի շտկել:

Հոկտեմբերի 11-ին Գխ կրկնական ընտրություններին մասնակցելը եւ ի վերջո նոր որակի դատգամավորների մուտքը խորհրդարան առաջադրվելն այս «եթե»ների շարքի խնդիր է: Բայց շատ հիշ է հույսը, թե ժողովուրդը կգնա ընտրամաս: Հուսահատվելով եղածից, նա չի կարողանում ելքեր գտնել: Չի դատկերացնում, որ 15-20 նոր դատգամավորներ կփոխեն խորհրդարանում ստեղծված հավասարակշռությունը եւ ի հետեւանք կարելի կլինի կտրականապես ներազդել Հայաստանում ընթացող բոլոր գործընթացների վրա:

Շատ հնարավոր է, որ նույնիսկ այս տարական հնարամտություններից էլ մենք զուրկ լինենք:

Երեւի թե նախաբանում ընդարկված թեզը, թե «ինչն է ստիպում հեղինակներին նորից ու նորից գրիչ վերցնել», իրականում անդատասխան մնաց, քանի որ այս հոդվածն էլ գրվեց ու այն ես անարդյունք է մնալու: Սակայն աչքի անցկացնելով գրածս, ես զգում եմ, որ այդ արդյունք ունեմ. ասածս ասել եմ, ես մեր եմ կանգնել ընդհանուր դատկերացումներից, եւ հենց այսքանով ես գործ եմ արել: Վաղը դուք գրեք եւ դուք վեր բարձրացեք միջինից: Սա է ճանապարհը եւ վերելքի, եւ ճշմարտության հաստատման: Սա է ուղին կեղծիքը հաղթահարելու եւ տհասին սանձահարելու:

ԱՐԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



Գործարար մարդկանց ձեռնարկություններին կազմակերպություններին եւ հաստատություններին

Մոտիկ ապագայում Երեւանում հնարավորություն է ստեղծվել ոչ կանխիկ (անհատների համար խնայբարձրույթներից) եւ կանխիկ հաշիվներով կոմպակտ սկավառակներից տնտեսական տեղեկությունների եւ յայներիշների յայնագրություններ պատվիրել շուկայականից ցածր գներով:

Մեր բանկում 500-ից ավելի անվանումներ կան, ներառյալ 1992 թ. Ֆիլմեր: Պատվերները կատարվում են ինչպես դատվիրատուի, այնպես էլ կազմակերպություն-կատարողի ժամանակների վրա: Բարձր որակը երաշխավորվում է:

Հեռ. 58.73.36, 56.71.70

PUBLISET

ԴԻԱԳՆՈՍՏԻԿԱ DIAGNOSTICA

Դիմեք մեր բժշկական կենտրոններին, եւ Ձեր առողջությունը հուսալի ձեռքերում կլինի:

Երեւան, Աջափնյակ, Մարգարյան փ. 6, հեռ. 35-01-58, 35-13-01
Քանաքեռ, Ֆանարջյան փ. 55, հեռ. 28-75-24,
Կենտրոն, Թումանյան փ. 23, հեռ. 53-85-81
Գյումրի, Շչեդրինի 54ա, հեռ 3-60-72
Գորիս, Մաշտոցի փ. 3, հեռ. 2-26-87

ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄԸ

- Առաջարկում է հիվանդությունների ախտորոշման բարձրագույն մակարդակ:
- Առաջարկում է ձեր առողջությունը ողջ կյանքի ընթացքում:
- Միայն մեզ Դուք կարող եք դիմել բոլոր հիվանդությունների դեմ եւ բոլոր բժշկական հարցերով, քանի որ «ԴԻԱԳՆՈՍՏԻԿԱ»ն ոչ միայն միջազգային դահանջներին համադասխանող ամենաժամանակակից սարքերն ու մասնագետներն ունի, այլեւ անհրաժեշտության դեպքում Ձեր բուժօգնությունը կազմակերպում է հանդարտությունից դուրս կամ համադասխան մասնագետներ է հրավիրում:
- Միայն մեզ մոտ Դուք կարող եք ստանալ Ձեր ախտորոշումը կամ առաջարկել առողջությունը կայուն եւ ցածր գներով, անկախ գոյց տվող բուժօգնության ծավալից եւ տեսակներից:
- Մենք ընդունում ենք բժիշկների տնային կանչեր (հեռ. 35-71-38) Դուք կարող եք անցնել հետազոտությունները ավելի առաջ եւ հասնելիս մքնոլորտում, եթե դիմեք մեզ ժամը 14.00-ից հետո կա. շաբաթ օրերը ժամը 9.00-ից մինչեւ 15.00:
- Ձեր հարմարության համար մենք աշխատում ենք ամեն օր (բացի կիրակի օրից), ժամը 8.30-ից մինչեւ 19.00, շաբաթ օրը՝ մինչեւ 15.00:

«Ազգ» թերթի համակարգչային ծառայությունը կատարում է Apple Macintosh համակարգիչների տեխնիկական որակյալ սպասարկում:

ԱԶԳ

Դիմելով մեզ, դուք կարող եք ձեռք բերել հայերենի ավտոմատ տողադարձիչ:

«Ազգ»ի համակարգչային ծառայությունը ընդունում է նաեւ



- գովազդների
- խորհրդանիշների
- ֆիրմային նշանների
- կնիքների
- հրավիրատոմսերի
- տարբեր տեսակի ազդագրերի
- եւ ընդհանրապես. համակարգչային ձեւավորման պատվերներ:

Դրանք կկատարվեն ձեր երեւակայածից բարձր մակարդակով:

«Հասցեն. Երեւան, Հանրապետության 47, «Ազգ» թերթ. ☎ 58-1841, 56-2863

digitised by A.R.A.R.@

Դա դա արեց ընտրություններից ընդամենը 33 օր առաջ, երբ, թվում է, ժամանակ չի մնում լիարժեք արշավ ծավալելու համար: Հունիսին տեսասցին հայտարարեց բոլորովին հակառակը. նախնական ծանոթության նպատակով սեփական միջոցներից ծախսելով մոտ 10 միլիոն դոլար, նա հայտնեց, թե իր թեկնածությունը չի առաջարկի:

Այժմ Պերոն հասկացավ, որ այն ժամանակ սխալ էր թույլ տվել, որի համար իր կողմնակիցներից, որոնց թիվը բավական նվազել է ամառվա համեմատ, երբ միլիարդատերը շատերին ներկայանում էր որպես «հարուստ մարդ փողոցից», անկեղծորեն ներողություն խնդրեց: Վերջերս անցկացված հարցման մասնակից ամերիկացիների 60 տոկոսը գտնում է, որ Պերոն չպետք է հվեարկվի: Սրիսակ տան համար պայքարին մասնակցելու իր պատրաստակամությունը միլիարդատերը բացատրում է նրանով, որ ոչ հանրապետական, ոչ դեմոկրատ թեկնածուները չեն ներկայացրել այնպիսի ծրագիր, որն իրոք կկարողանար արմատապես բարելավել Ամերիկայի տնտեսական իրավիճակը եւ մասնավորապես կարճ ժամանակում վերջ տալ բյուջետային դեֆիցիտին: Պերոն, իր սեփական համոզմամբ, այդպիսի ծրագիր ունի:

Տնտեսագետներից շատերը, ծանոթանալով այդ ծրագրին, եկան այն եզրակացության, որ ծրագիրը իրական է, այն կարող է տալ խոստացված արդյունքներ: Սակայն, ըստ երեւույթին, խողությունն այն է, որը միլիոնավոր ընտրողների համար ծրագիրը վերածվում է մի դարձ հաբի, որը իշերը կցանկանան կուլ տալ նոյեմբերյան ընտրություններին: Այս, բյուջետային դեֆիցիտը կարելի է կրճատել եւ նույնիսկ հասցնել զրոյի, սակայն դրա համար, ինչպես առաջարկում է միլիարդատերը, անհրաժեշտ կլինի էապես բարձրացնել հարկերը եւ խիստ նվազեցնել սոցիալական ծրագրի վերաբերյալ դաշնակցային ծախսերը:

Շատերն են հիշում 1984 թվականի ընտրարշավը, երբ Ռոլֆեր Մոնդեյլը այն ժամանակ դեմոկրատների թեկնածուն, իր բոլոր հնարավորություններն ի չիք դարձրեց մի խոսքով. *«Ես կբարձրացնեմ հարկերը»:* Քաղաքագետներին առանձնապես չի ներվում ազնվությունը, որը հիանալի հասկացավ Ջորջ Բուշը: Նա ձգտելով նախագահական բազկաթոռին, 1988 թ. խոստացավ. *«Ես չեմ բարձրացնի հարկերը»,* եւ դառնալով նախագահ, ընդամենը 1 տարի անց բարձրացրեց դրանք, որի համար էլ ներկայումս նրա վերընտրվելու հնարավորությունները փոքր են:

Պերոյի վերադարձը նախընտրական արշավ ուժերի դասակարգման մեջ զգալի է առաջացնում: Քաղաքագետների կարծիքները բաժանվում են. մի մասը գտնում է, որ Պերոն կօգնի Բուշին, քանի որ Միջին Արեւմուտքի մի շարք կարեւոր նահանգներում կլսվի ձայները Քլինթոնից, մյուսները համոզված են, որ ձայներ կխլի հենց Բուշից՝ օրինակ, Տեխասում եւ Ֆլորիդայում, եւ որ այդ պատճառով միլիարդատիրոջ որոշումը նվեր է Քլինթոնին: Հատկանշական է, որ ոչ ոք Պերոյին հաղթանակ չի գուշակում: Եվ իրոք, դժվար է պատկերացնել ուժերի այնպիսի դասավորություն, երբ տեխասցին, նույնիսկ գործի դնելով իր միլիարդները, հաղթանակի: Նա ունի մի մեծ թերություն՝ ծայրահեղ լարված հարաբերությունները մամուլի հետ, որն անբարյացակամ է միլիարդատիրոջ նկատմամբ այն բանի համար, որ նա բացահայտորեն ծաղրում էր իրենց:

Հետաքրքիր մի տեղեկություն. բոլոր երեք թեկնածուներն էլ ծախլիկ են: ■

Ռոս Պերոն խառնում է նախընտրական քարտերը

Տեխասցի միլիարդատեր Ռոս Պերոն հերթական անգամ զարմացրեց բոլորին, հատկապես փորձագետ-քաղաքագետներին, որոնք համոզված ասում էին, որ այս մարդու քաղաքական կարիերան ավարտվեց: Անցած շաբաթ Պերոն կրկին ներգրավվեց նախընտրական արշավի մեջ:



Ինչպես նշեցինք, 1988 թվականին նա ինքնաբերաբար դարձավ Ռեսպուբլիկանների կուսակցության նախագահի թեկնածու: Սակայն, ինչպես հետագայում ցույց տվեցին նոյեմբերյան ընտրությունները, նա ոչ միայն չկարողացավ հաղթել Պերոյին, այլեւ ստացավ ընդամենը 19 տոկոս: Ամերիկացիներին դուր չեկավ Պերոյի ինքնավստահությունը, նրանք նրանում տեսան ինքնասիրահարի, որը ոչ մի կերպ չի հանդուրժում հակառակորդներին: Ամերիկացիներին դուր չեկավ նաեւ Պերոյի ինքնասիր

Կոոպերացիայի զարգացումը կրթության ոլորտում

ԱՊՀ երկրների կրթության նախարարները Տաշքենդում կայացած հանդիպման ժամանակ կողմ արտահայտվեցին մի շարք ոլորտներում կոոպերացիայի զարգացմանը, այդ թվում՝ ուսումնական լաբորատորիաների, դպրոցների, պրոֆեսիոնալական ուսումնարանների եւ բուհերի տեխնիկական արդիականացմանը, կրթության մակարդակի ստանդարտների հաստատմանը՝ հաշվի առնելով շրջանային հատկությունները: Հաստատվել է կրթության նախարարների մշտապես գործող հանձնաժողովը, որը կաջակցի կրթության համակարգերի զարգացմանը: Ուզբեկստանի կրթության նախարար Զուրա Յուլդաշեւը նշեց, որ ԱՊՀ երկրների կրթության համակարգերի խնդիրները նման են, ուստի նրանց լուծման համար անհրաժեշտ է վերականգնել կապերը ԱՊՀ երկրների ուսումնական հաստատությունների միջեւ:

Վերջին նախընտրական օրերը Վրաստանում

Սթածմինդայի ոստիկանության աշխատակիցները ձերբակալել են 3 երիտասարդների, որոնք գիշերները Թբիլիսիի կենտրոնական պողոտաներից պոկում էին նախընտրական պաստառները: Քաղաքային ոստիկանության պետ Զեինկիձեի կարծիքով, նախկին նախագահի կողմնակիցները ծգտում են մինչեւ հոկտեմբերի 11-ը մնացած օրերն օգտագործել չարտոնված հանրահավաքներ ու ցույցեր կազմակերպելու համար: Սակայն նրանց դեմ կկիրառվեն օրենքով սահմանված բոլոր միջոցները, որպեսզի հանրապետության խորհրդարանի ընտրությունները անցնեն առանց որեւէ միջադեպի:

Շեւարդնաձեն ճգնաժամից դուրս գալու ելք չի տեսնում

«Ցավում եմ, որ այս կեղտոտ պատմությանը ինչ-որ չափով մասնակցում է նաեւ Ռուսաստանը, որն օրինականացնում է աբխազ անջատողականների գործողությունները», այսպես գնահատեց Գագրայի ողբերգության հետեւանքները էդուարդ Շեւարդնաձեն: Նա հայտնեց, որ մինչեւ վերջին ժամանակներս հույս ուներ հաշտեցնել կողմերին եւ հետ բերել զորքերը, սակայն վերջին իրադարձությունները, Սուխումի, Լեսելիձեի, Գանթիադիի բնակիչների տրամադրվածությունը, որոնք չեն ներում մոսկովյան համաձայնագիրը խախտողներին, իրեն փակուղի են մտցնում, եւ նա ճգնաժամից դուրս գալու ելք չի տեսնում:

«Ինտերֆաքս»ի ռուսները գործում են

Այս տարվա սկզբից «Ինտերֆաքս»ի ռուսական ազգային կենտրոնական բյուրոյի աշխատակիցներն օժանդակել են Ռուսաստանի Դաշնության եւ արտասահմանյան երկրների իրավապահ մարմիններին՝ բացահայտելու 797 հանցագործություն (այդ թվում՝ 56 սպանություն, 310 ավազակային կողոպուտ, կեղծ դրամի պատրաստման 192 փաստ, մշակութային արժեքների 93 գողություն, 147 հանցագործություն տնտեսական ոլորտում): «Ինտերֆաքս»ի կապերի միջոցով ստուգվել են 1055 անձինք եւ հայտնաբերվել 52 հանցագործ, 98 անհայտ կորած: Հայտնաբերվել են նաեւ 128 գողացված առարկա եւ 117 ավտոմեքենա: Օգոստոս-սեպտեմբեր ամիսներին «Ինտերֆաքս»ի ռուսական աշխատակիցները սկանդինավյան գործընկերների հետ համագործակցելով՝ վնասազերծել են 3 հանցագործ խումբ, որոնք 1992-ին Ռուսաստանի եւ մի շարք եւրոպական այլ երկրների տարածքում կատարել են ավտոմեքենաների 127 գողություն:

Պարոնյանի թատրոնը նորացած

Ասում են՝ թատրոնը սկսվում է հանդերձարանից: Երբ ավելի ուշադիր լինենք, թատրոնն սկսվում է մուտքից: Դեռեւս Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի թատրոնի նորակառույց շենք չհասած՝ զգում ես թատրոնի շունչը: Թատրոնի դիմաց տեղադրված փողոցային լույսերը ոչ միայն խավարի մեջ թաղված փողոցն են լուսավորում ու հանդիսատես գրավում, այլեւ թատերական դատկեր են ստեղծում: Շենքից ստացած տպավորությունը բոլորովին չի փոխվում ներս մտնելուց հետո: Մարմարակերտ նախասրահը, զորգաղաս ասիճանները, ճաշակով ու անդաճույշ ներքին ձեւավորումն արդեն նոպաստավոր տրամադրություն են ստեղծում: Իսկ ամենից անտդասելին թատրոնի աշխատողների չափազանց սիրալիր վերաբերմունքն է, տղաաարկման բարձր մակարդակը, որին մենք բոլորովին սովոր չենք: Ուզում ենք հավատալ, որ այդ բարեկրթությունը թատրոնի շենքի շահագործման հանձնելու հետ կապված ժամանակավոր միջոցառում չի լինի, այլ հաճելի ավանդույթ կդառնա: Դրանով Պարոնյանի թատրոնը կտարբերվի մյուս թատրոններից:

Այս բոլորը, նաեւ ներկայացման սկիզբն ազդարարող հաճելի երաժշտությունն ու հայերեն, անգլերեն հնչող ազդարարումը, արդեն բարենդաստ թատերական մթնոլորտ են ստեղծում, ներկայացումը դիտելու հաճելի տրամադրվածություն առաջացնում: Այդ տոնական տրամադրությունը բացակայում է այլ թատրոններում, անգամ մայր թատրոնում, որտեղ չկան հաճելի փոքրիկ անակնկալներ, ներկայացումները ոչ մի կերպ չեն ազդարարվում: Իսկ արվեստը ոլորտ տոն լինի: Արվեստի հետ շփումը ծանր աշխատանքից հետո ոլորտ լիցքաթափի, հաճույք պատճառի ու անակնկալներ մատուցի:

Թատրոնի նոր շենքում նոր ձեւով սկսված թատերական կյանքը, կարծում ենք, պարոնյանցիներին ստեղծագործելու նոր լիցքեր կհաղորդի, իսկ հանդիսատեսին նոր հաճելի պահեր կդարգեւի:

ԱՐՄԻՆԵ ՕՀԱՆՅԱՆ

Երիտասարդ կատարողների «Ամադեուս» մրցույթը

Սեպտեմբերի 20-ից 30-ը Երեւանում անցկացվեց երիտասարդ կատարողների «Ամադեուս» մրցույթը, որը կազմակերպվել էր ՀՀ մշակույթի նախարարության եւ Բելգիայի «Ամադեուս» ուսումնական հաստատության, Սփյուռքահայության կոմիտեի «Նոր անուններ» ֆոնդի կողմից: Մրցույթը նվիրված էր Հայաստանի անկախության տարելիցին: Մրցույթն անցկացվեց չորս խմբերով. դաշնամուր (ավագ եւ կրտսեր), ջութակ (ավագ եւ կրտսեր): Հոկտեմբերի 6-ին, ժամը 11-ին Հայաստանի լրագրողի տանը կայացավ մրցույթի ժյուրիի նախագահ Հովհաննես Անասասյանի (Բելգիա) մամուլի ասուլիսը: Անասասյանը հայտնեց, որ մրցույթին մասնակցել է 70 մարդ: Ժյուրիի կազմում եղել են այնպիսի անվանի երաժիշտներ, ինչպիսիք են Սվետլանա Նավասարդյանը, Լեւոն Չուխաջյանը, Ռուբեն Ահարոնյանը եւ այլք:

Հատուկ ուշադրություն է դարձվել հայ հեղինակների գործերին: Պրն. Անասասյանը նշեց, որ երեխաները հայ մշակույթի նվաճումն են հենց այն դատճառով, որ ապրում են Հայաստանում: *«Շատ Ազնավուրը հայ է ազգությամբ, բայց օտար մշակույթի կրող է»*, ասաց պրն. Անասասյանը:

Մամոկի ասուլիսում հայտարարվեցին հաղթողների անունները, իսկ «Գրան-Պրի» մրցանակի դափնեկիրը կհայտարարվի հոկտեմբերի 10-ի ավարտական համերգում. նրան համերգային շրջագայություն է սպասվում Բելգիայում: Ամենաավագ մրցանակակիրը 16-ամյա Աննա Սարաջյանն է, ամենակրտսերը՝ 10-ամյա Գեորգ Ղարաբեկյանը: Մրցույթի հովանավորներն են Բելգիայի հայերի կոմիտեն, Բրյուսելի կանանց միությունը, Անտվերպենի հայերի երիտասարդական միությունը, Բելգիայի հայ համայնքի առաջնային ներկայացուցիչներ, հայտնի դիրիժոր Օհան Դուրյանը, որը հատուկ 25000 ռուբլի մրցանակ է սահմանել *«այն կատարողի համար, որը լավագույնս կդրսեւորի անսամբլային զգացողություն»*: ■

Նոր գոբելեն Ս. Էջմիածնի վեհարանում

Տորոնտոյից (Կանադա) տիկին Զվարթ Պոյաճյանի եւ զավակների նվիրատվությամբ մի քանի օր առաջ Մայր աթոռ Ս. Էջմիածնի վեհարանը զարդարվեց նոր գոբելենով, որը նվիրատուների ներկայությամբ եւ Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությամբ կախվեց վեհարանի ընդունարանում: 3x2 մետր մակերեսով գործի հեղինակն է նկարիչ Գրիգոր Խանջյանը, իսկ հյուսվածքինը՝ հայաստանցի վարպետ գորգագործները: Այն կոչվում է «Վերածնվող Հայաստան»:

«Փոխ» պատմության համար ավելացնենք, որ մոտավորապես 4 տարի առաջ նախածեռնված այս գործն իր սկզբնական տարբերակում ունեցել է մի մանրամասնություն, որը «ժամանակների ոգուն համապատասխան» փոփոխություն է կրել հետագայում. գոբելենի վրա պատկերված բանվորի ձեռքին մուրճ ու մանգաղ է եղել, որը հետագայում փոխարինվել է հայկական եռագույնով: Բացի սրանից, ստեղծագործությունը մի ժամանակ կոչվել է «Վերածնված Հայաստան»: ■

ՄԱՐՁԱԿԱՆ ՄԱՐՁԱԿԱՆ ՄԱՐՁԱԿԱՆ

Եվ Կասպարովը, եւ Ֆիշերը՝ 2780

Ավարտելով շախմատիստների միջազգային նոր գործակիցների հրապարակումը, ընթերցողներին ուշադրությանն ենք ներկայացնում աշխարհի ուժեղագույն գրոսմայստերների ցուցակը:

Հետաքրքիր է, որ Շորը եւ Թիմանը, որոնք առաջիկա հունվարին պետք է մրցախաղում վիճարկեն Կասպարովին ձեռնոց նետելու իրավունքը, ՖԻԴԵ-ի դասակարգման մեջ զբաղեցնում են միայն 7-րդ եւ 9-րդ տեղերը:

Սարգասյաններին անշուշտ հետաքրքրում է Ֆիշերի ուժի համադրությունը ժամանակակից առաջատարների հետ: 1972 թ., երբ ամերիկացի գրոսմայստերը երկու տասնամյակով ընդհատեց իր ելույթները, նրա գործակիցը 2780 էր:

Համաձայն ՖԻԴԵ-ում ընդունված կարգի, եթե շախմատիստը երեք տարի անընդմեջ ելույթ չի ունենում, նրա անունը դուրս է մնում հիմնական դասակարգումից եւ անցնում է «ոչ ակտիվների» շարք: Բնականաբար, նույնը եղավ եւ Ֆիշերի հետ: Բայց բավական է, որ նման շախմատիստը վերսկսի իր ելույթները, եւ նրա գործակիցը, կրկին ՖԻԴԵ-ի օրենքներով, միանգամից ինքնաբերաբար վերականգնվում է: Այսպիսով, մի քանի շաբաթ առաջ «մոլորյալ որդու» վերադարձից հետո Ֆիշերը եւ Կասպարովն ունեն նույն ռեյտինգը՝ 2780:

Իսկ ի՞նչ դիրք է գրավում Ֆիշերի ներկայիս մրցակիցը: Բավականին հետեւ: Սոլասկին (անհատական գործակիցը՝ 2560) այսօր աշխարհում բաժանում է 96-102-րդ տեղերը:

Կանանց մեջ իշխում են նշանավոր Պոլգար քույրերը: Աշխարհի չեմպիոնուհի Սե Չժունը, որքան էլ տարօրինակ թվա, միայն հինգերորդ տեղում է:

Աշխարհի ուժեղագույն շախմատիստները

1. Գարի Կասպարով (Ռուս.)	2780
2. Վասիլի Իվանչուկ (Ուկր.)	2720
3. Անատոլի Կարպով (Ռուս.)	2715
4. Ալեխեյ Շիրով (Լատվիա)	2710
5. Վիշվանաթան Անանդ (Հնդկաստան)	2690
6. Բորիս Գելֆանդ (Բելառուս)	2685
7. Նայջել Շորթ (Անգլիա)	2680
8. Եվգենի Բարեեւ (Ռուս.)	2670
9. Յան Թիման (Հոլանդիա)	2665
10-11. Գատա Կամսկի (ԱՄՆ)	2655
10-11. Վալերի Սալով (Ռուս.)	2655

Աշխարհի ուժեղագույն շախմատիստուհիները

1. Յուդիթ Պոլգար (Հունգարիա)	2575
2. Ժուժա Պոլգար (Հունգարիա)	2540
3. Պիա Կրամլինգ (Շվեդիա)	2530
4. Մայա Չիբուրդանիձե (Վրաստան)	2505
5. Սե Չժուն (Չինաստան)	2480
6-7. Նանա Իոսելիանի (Վրաստան)	2445
6-7. Սոֆիա Պոլգար (Հունգարիա)	2445

Գ. Հ.

Շախմատի ՀՀ կանանց առաջնություն

Ասլանյանի հաղթարշավը

Շախմատի Հայաստանի կանանց առաջատար Լյուդմիլա Ասլանյանը հանրապետության առաջնությունում առայժմ մրցակցությունից դուրս է: Անցկացրած 5 հանդիպումներում նա միայն հաղթանակներ է տարել եւ 2-րդ տեղում ընթացող Արուսյակ Գրիգորյանից առաջ է անցել 1,5 միավորով: ■

ՀՀ բարձրագույն խմբի առաջնություն

Եզրափակիչ փուլ 1-12-րդ տեղեր, 7-րդ տուր

«Զվարթնոց» - «Նաիրի» 1:1, «Վան» - «Արարատ» 0:1, «Կիլիկիա» - ՀՄԸՄ 1:12, «Կոտայք» - «Բանանց» 1:2, «Շիրակ» - ՀՄՄ-ՖԻՄՄ 3:1

Առաջնության աղյուսակը Հոկտեմբերի 8-ի դրությամբ

1. ՀՄԸՄ	17	13	3	1	56-19	29
2. Շիրակ	17	13	2	2	41-11	28
3. Բանանց	17	13	2	2	48-20	28
4. Արարատ	17	11	3	3	56-13	25
5. Վան	17	9	1	7	32-32	19
6. Սյունիք	15	5	3	7	28-30	13
7. Կոտայք	17	5	3	9	20-33	13
8. Զվարթ.	17	3	5	9	28-44	11
9. Նաիրի	17	3	5	9	14-39	11
10. ՀՄՄ-ՖԻՄՄ	17	3	4	10	21-33	10
11. Կիլիկիա	17	3	2	12	21-67	8
12. Կանաչ	15	1	3	11	17-41	5

Բաժինը վարում է Սուրեն ԲԱԴԱԼՅԱՆԸ

ՖԻՇԵՐ-ՍՊԱՍԿԻ

15-րդ դարտիա

1. c4 e6 2. ձf3 ձf6 3. g3 d5 4. փg2 փe7 5. 0-0 0-0 6. d4 ձbd7 7. ձbd2 b6 8. cd ed 9. ձe5 փb7 10. ձdf3 ձe4 11. փf4 ձdf6 12. նac1 c5 13. dc bc 14. ձg5 ձ:g5 15. փ:g5 ձe4 16. փ:e7 Ք:e7 17. փ:e4 de 18. ձc4 e3 19. f3 նad8 20. Քb3 նfe8 21. նc3 փd5 22. նfc1 g6 23. Քa3 փ:f3 24. ef e2 25. նe1 նd1 26. Աf2 ն:e1 27. Ա:e1 Քd7 28. Քb3 Քh3 29. ձe3 Ք:h2 30. g4 նb8 31. Քd5 ն: b2 32. Քd8+ Աg7



33. ձf5+, gf ոչ-ոքի: ■

digitised by A.R.A.R.@

Գազի ծավալները եւ հացի քանակը ավելանում են, սակայն...

Յուրաքանչյուր շնչին 300 գ հաց կտրվի

Երեկ կայացած բրիֆինգում ՀՀ կառավարության լրատվական ծառայության ղեկավար Վլ. Մանոյանը հայտնեց, որ վերջին երկու օրերի ընթացքում Հայաստան մտնող գազի ծավալները ավելացել են. դրանք կազմել են 4,5 մլն. խորանարդ մետր:

Վրաստանում են գտնվում ՀՀ կառավարության ներկայացուցիչները, որոնք պետք է հետեւեն տեխնիկական անհարթությունների կարգավորման աշխատանքներին: Վերանորոգումից հետո գազի ծավալները կավելանան մինչեւ 7-7,5 մլն. խմ: Դրանից հետո գազ կտրվի նաեւ Երեւանի եւ աղետի գոտու բնակչությանը:

Գազալի բարելավվել է նաեւ հացի ներմուծումը: Երկու օր առաջ հանրապետություն է մտել 16 վագոն ալյուր, երեկ 32 վագոն ցորեն, ճանապարհին է եւս 130-ը:

Բաքումում շուտով նավահանգիստ կմտնի 2400 տոննա հացահատիկով բեռնված նավը, որի հասցեատերը Հայաստանն է: Փոխարինաբար տրվելիք 100 հազար տոննա հացահատիկի փոխադրման հարցերի կարգավորման նպատակով Թուրքիա է մեկնել Հայաստանի կառավարության պատվիրակությունը ղեկավար Գագիկ Շահբազյանի գլխավորությամբ: Բանակցությունները՝ տեղի կունենան այսօր: Վերջին օրերի ընթացքում մայրաքաղաքում կայուն կերպով բխվում է 472 տոննա հաց: Բայց զարմանալիորեն հացի խանութների մոտ հերթերը չեն նվազում:

Պարոն Մանոյանը դա բացատրում է երկու պատճառներով՝ բնակչությունն սկսել է ավելի շատ հաց օգտագործել եւ Երեւանի խանութների հաճախորդների մեջ զգալի բիվ են կազմում շրջանների բնակիչները:

Սկզբունքորեն որոշված է նաեւ հացի նորմավորման հարցը, եւ մեծ հավանականությամբ հոկտեմբերի կեսից հետո բնակչությանը կտրոններ կտրվեն:

Մեկ շնչին հասանելիք հացը կկազմի 300 գրամ: Իսկ գների փոփոխություն կառավարությունն առայժմ չի նախատեսում: Հ. Պ.

Գագաթաժողովի նախօրեին

Այսօր, Բիշքեկում կայանալիք ԱՊՀ պետությունների ղեկավարների խորհրդակցության նախօրեին սկսվել է պատգամավորության նախարարների հանդիպումը: Ինչպես հայտնի դարձավ «ԻՏԱ»ի թղթակցին Ղրղզստանի ռազմական պատվիրակությանը մոտ աղբյուրներից, քննարկմանը ներկայացված փաստաթղթերից կարող է ընդունվել եւ հաստատվել մոտավորապես կետը:

Երեկ եւ այսօր Բիշքեկում տեղի է ունենում նաեւ նախկին Խ. Միության բոլոր 15 հանրապետությունների կենտրոնական եւ ազգային բանկերի ներկայացուցիչների խորհրդակցությունը: Քննարկվում են ընդհանուր տնտեսական տարածքի պահպանման, ֆինանսական համաձայնեցված քաղաքականություն վարելու մասին հարցը, ինչպես նաեւ միջպետական վճարումների խնդիրները: ■

Բիշքեկում գլխավորը ռուբլու գոտում գտնվողների փոխհարաբերությունների ճշգրտումն է լինելու

Վաղը Ղրղզստանի մայրաքաղաքում կսկսվի ԱՊՀ պետությունների եւ կառավարությունների ղեկավարների խորհրդակցությունը:

Երեկ ՀՀ կառավարության լրատվական ծառայության ղեկավար Վլադիմիր Մանոյանի հրավիրած բրիֆինգը նվիրված էր ԱՊՀ անդամ երկրների կառավարությունների ղեկավարների քննարկմանը ներկայացված հարցերի հրաժարակմանը եւ դրանց նկատմամբ Հայաստանի դիրքորոշումների պարզաբանմանը: Նա տեղեկացրեց, թե կառավարությունների ղեկավարները քննարկելու են քառակողմ՝ հիմնականում տնտեսական բնագավառին վերաբերող հարցեր: Դրանցից հատկապես կարեւորվում են տնտեսական օրենսդրության մերձեցման, դրամավարկային եւ վայրուսային քաղաքականության, տնտեսական կոնսուլտատիվ-կոորդինացիոն խորհրդի եւ տնտեսական դատարանի ստեղծման խնդիրները:

Հայաստանի կառավարությունը գտնում է, որ մնալով ռուբլու գոտում, հարկավոր է ստեղծել միջպետական այնպիսի մի մարմին, որը կնպաստի համաձայնեցված էմիսիոն քաղաքականության մշակմանը եւ մասնակից բոլոր պետությունների համար հավասար պայմաններ կաղահովի:

Կառավարության ղեկավարները կքննարկեն նաեւ Միջազգային հեռուստաընկերության ստեղծման եւ մարդու իրավունքների բնագավառում միջազգային պարտավորությունների մասին հարցերը: ■

Կտրոններով նորից ծխախոտ եւ շաքարավազ կտրվի

ՀՀ կառավարության լրատվական ծառայության տված տեղեկությունների համաձայն, մինչեւ այս շաբաթվա վերջ բնակչությանը կբաժանվեն ծխախոտի եւ շաքարավազի գնման կտրոններ նախորդ ամսվա նորմաներով. յուրաքանչյուր շնչին չորս տուփ ծխախոտ եւ 500 գ շաքարավազ: Մինչեւ հոկտեմբերի 15-ը կտրվեն նաեւ կարագի գնման կտրոններ յուրաքանչյուր բնակչին 200-ական գրամի չափով: ■

Նոր կովկասյան պետությո՞ւն

Գրոզնիում ավարտված Կովկասի լեռնային ժողովուրդների արտակարգ համագումարը որոշեց ստեղծել հյուսիսկովկասյան հանրապետությունների համադաշնություն: Համագումարում ելույթ ունեցավ ԿԼԺՀ-ի նախագահ Մուսա Շանիբովը հայտարարեց, թե այսօրվա կովկասյան իրադարձությունները կունենան դարակազմիկ նշանակություն: Նա դա կապում է ռուսական զանգվածային կայսրության փլուզման հետ: Համադաշնությունը պետք է ստեղծվի ոչ բռնի ճանապարհով եւ տեւի հինգից տասնհինգ տարի: Միայն այդ ժամանակահատվածի վերջում կստեղծվեն համադաշնության հանրապետությունների կառավարման միացյալ մարմիններ, որոնք էլ կդառնան 1918-19թթ. ընդհանուր հանրապետության իրավաժառանգորդը: Հռչակագրում համագումարն առաջարկում է չեղյալ հայտարարել Ռուսաստանի Դաշնակցային պայմանագիրը որպես Հյուսիսային Կովկասի ժողովուրդների ազգային շահերին չհամապատասխանող փաստաթուղթ: ■

Աբխազիայի իրադարձություններն սպառնում են Ռուսաստանին

Աբխազիայի վերջին իրադարձությունները աղակայունացնում են իրավիճակը Կովկասում, սպառնում ոչ միայն վրաց-ռուսաստանյան հարաբերություններին, այլեւ Ռուսաստանի Դաշնությանը, գտնում է Վրաստանի Պետխորհրդի նախագահի օգնական Թեյմուրազ Ստեղանովը: «ԻՏԱ»ին տված հարցազրույցում նա նշեց, թե Աբխազիայի հակամարտության բեժացումը շա՝ բանով պայմանավորված է նրանով, որ որոշ ուժեր ինչպես ներսում, այնպես էլ Վրաստանից դուրս ձգտում են ձախողել հոկտեմբերի 11-ին նշանակված խորհրդարանական ընտրությունները: Այնուամենայնիվ նա համոզված է, որ ընտրությունները կկայանան. *«Եթե որեւէ արտասովոր բան տեղի չունենա»*: *«Վրաստանի համար դա կյանքի եւ մահվան, նրա պետության եւ հեղինակության հարց է»*, նշեց է. Շեւարդնաձեի օգնականը: Թ. Ստեղանովը չի կասկածում, որ Շեւարդնաձեն կհաղթի ընտրություններում: Նրա կարծիքով, այն ամենից հետո, ինչ տեղի է ունեցել, *«Վրաստանի քաղաքացիների գերակշռող մասն էլ ավելի է համախմբվում է. Շեւարդնաձեի շուրջը»*: ■

Հայտարարություն

Ազգային ինքնորոշում միավորման նախաձեռնությամբ շաբաթ օրը, հոկտեմբերի 10-ին, ժամը 16.00-ին Անկախության հրապարակում տեղի կունենա հանրահավաք՝ նվիրված Հայաստանի Հանրապետությունում եւ Արցախում տիրող ծանր սոցիալ-տնտեսական եւ ռազմաքաղաքական իրավիճակի քննարկմանը: Համընդհանուր ծգնաժամից դուրս գալու ուղիների մասին մտքերի փոխանակմանը կհետեւեն առաջարկություններ՝ ուղղված Հայաստանի Հանրապետության իշխանություններին եւ հանրությանը: Հանրահավաքին մասնակցել կամեցող-կազմակերպություններին խնդրում ենք դիմել Ազգային ինքնորոշում միավորման կենտրոնական գրասենյակ՝ պատասխանատու քարտուղարին:

Ազգային Ինքնորոշում Միավորում

ԱԶԳ

Շաբաթ օրը, հոկտեմբերի 10-ին, Կամերային երաժշտության տանը (Երեւան, Իսահակյան 1) տեղի կունենա ցերեկույթ՝ նվիրված հայ գրականության, բանահյուսության եւ ազգագրության մեծ երախտավոր Գարեգին Սրվանձտյանցին:

Ծրագրում՝ հակիրճ զեկուցում, ելույթներ, ճոխ համերգ:

Սկիզբը՝ ժամը 14:30-ին: Մուտքն ազատ է:

«Վասպուրական» հայրենակցական միություն

«Արամ Խաչատրյան» Մեծ Համերգասրահ

68-ՐԴ ՀԱՄԵՐԳԱՇՐՋԱՆ

4485-4486 Հայոց Թվական

Հայաստանի Ֆիլհարմոնիկ նվագախումբ

Գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր՝ ԼՈՐԻՍ ՃԳՆԱՎՈՐՅԱՆ

Համերգաշրջանի հովանավորն է Հայ Բարեգործական Ընդհանուր Միությունը

9 հոկտեմբեր

ՆՎԻՐՎՈՒՄ Է ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՕՐՎԱՆ

Կաղ Մարիա Վեբեր.

«Պարի հրավեր»

Գագիկ Հովունց.

Կոնցերտ ջութակի եւ նվագախմբի համար

(Արտաշես Մկրտչյան)

Դիրիժոր՝ Լորիս Ճգնավորյան

Սկիզբը՝ ժամը 19.30-ին:

Տոմսերը վաճառվում են «Արամ Խաչատրյան» համերգասրահի տոմսարկղում, ամեն օր ժամը 11-18-ը:

ՀԱՅԿՈՐ ՊԱՐՈՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Հ. ՊԱՐՈՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԿՈՄԵԴԻԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐ ԱՄՍՎԱ ԽԱՂԱՑԱՆԿ

Հոկտեմբեր 9, 16

ԺԱՆ ԲԱՏԻՍՏ ՄՈԼԻԵՐ-Վ. ԿՈՏՈՅԱՆ

«Ադուլը քաղաքում»

(Երաժշտական կոմեդիա 2 մասով)

Հոկտեմբեր 10, 11

Հ. ՊԱՐՈՆՅԱՆ-Ս. ԼՈՒՍԻԿՅԱՆ

«Մեծադատիվ մուրացկաններ»

(Մյուզիքլ՝ 2 մասից)

Հոկտեմբեր 13

Գ. ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ

«Ախ, ներվեր, ներվեր...»

(Կոմեդիա 3 գործ.)

Հոկտեմբեր 14

Ժ. ՖԵՅԴՈ

«Կասկածը կնոջ արտում»

(Կոմեդիա 3 գործ.)

Հոկտեմբեր 15

Ժ. ԱՆԱՆՅԱՆ

«Թռչող ափսեից իջած մարդը»

(Կոմեդիա 2 մասով)

Թատրոնի գեղարվեստական ղեկավար՝ Արմեն Էլբակյան

Ներկայացումների սկիզբը՝ ժամը 18:30-ին:
Տոմսերը վաճառվում են ժամը 10-14-ը եւ 16-18-ը:
Հասցեն՝ Խորհրդարանային 4, Հանրապետության հրապարակ («Արմենիա» հյուրանոցի մոտ)

Լուրերի հոսք

Թաքարների ցույցեր Ղրիմում

Ղրիմի թաքարների ղեկավար Մուսաֆա Ջեմիլեւը հայտարարեց, թե Սիմֆերոպոլում անցկացվող բողոքի ցույցը կշարունակվի, մինչեւ որ ազատ չարձակվեն այն թաքարները, որոնք ծերբակալվել էին Ալուշտայի մոտակայքում տեղակայված վրանային ճամբարը քանդելու ժամանակ: Հոկտեմբերի 6-ին թաքարները փորձել են գրոհել Ղրիմի Գերագույն խորհրդի շենքը: Նրանց հաջողվել է գրավել առաջին հարկը: Հետո ցուցարարները հանրահավաք են կազմակերպել Լենինի հրապարակում, շրջափակելով երբեւեկությունը Սիմֆերոպոլի կենտրոնում: Որոշ տվյալներով, հոկտեմբերի 6-ի անկարգությունների ընթացքում միլիցիան օգտագործել է ջրացայտեր եւ արտասվաբեր գազ: ■

Ընդհանուր բշնամին

Ազգայնականության աճը շատ է մտահոգում Ռուսաստանի եւ Գերմանիայի արտգործնախարարներին: Գերմանիայի արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավար Կլաուս Կինկելը, որը հոկտեմբերի 6-ին առաջին անգամ պաշտոնական այցով ժամանել էր Մոսկվա, եւ Ռուսաստանի նախագահ Անդրեյ Կոզիրեւը շոշափեցին այս խնդիրը մինչեւ պաշտոնական բանակցությունների սկիզբը: Կ. Կինկելի խոսքերով, եթե «խոսենք ազգայնականության մասին, Ռուսաստանում եւ Գերմանիայում տեղի են ունենում նմանատիպ գործընթացներ»: Անուղղակիորեն ազգայնականության սպառնալիքի մասին հիշատակեց եւ Անդրեյ Կոզիրեւը: Ելույթ ունենալով դեսպանատան բացման արարողության ժամանակ, նա նշեց, թե այս շենքը նոր է, ուստի եւ այնտեղ չպետք է լինեն «հետկոմունիստական Եւրոպային սպառնացող ուրվականներ»: Ռուսաստանի նախագահը նշեց, թե Մոսկվան չի փոխի արտաքին քաղաքականության ուղղվածությունը: ■

Էստոնիա. կենցաղի «գինը»

Էստոնիայի մայրաքաղաքում սահմանվել են կենցաղային ծառայությունների նոր տարիֆներ: Սեպտեմբերին եւ հոկտեմբերին յուրաքանչյուր ամսվա համար 1 սենյականոցում ապրող քաղաքացին տաք ջրի համար վճարելու է 30 կրոն եւ 90 ցենտ, ջեռուցման համար՝ 30 ցենտ յուրաքանչյուր մ.մ-ի համար (մոտ 67 կրոն), սառը ջրի եւ կոյուղու համար՝ 7,2-ական կրոն: Առանց ավելացրած նաեւ էլեկտրականությունն ու հեռախոսը: Եթե վճարումների գումարը գերազանցում է տալլինցու եկամտի կեսը, տարբերությունը փոխհատուցվում է պետության կողմից: Էստոնիայում նվազագույն աշխատավարձը 300 կրոն է, նվազագույն թոշակը՝ 200 կրոն: ■

Լուրերը՝ ինտերֆաքսի «Սնարի», «Նոյան տապանի» եւ մեր թղթակիցների

ԱԶԳ

Հիմնադիր եւ հրատարակիչ «Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ

Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ

Խմբագիր
ՀԱՍԼԵՏ ԳԱՍՊԱՐԵԱՆ

Տնօրէն ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ

52.16.35 գլխ. խմբ.
58.18.41 խմբագիր
56.28.63 տնօրէն

Apple® Macintosh® համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Azg Daily, 47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 375010

Editor H. AVEDIKIAN

ՀՀ նախարարների խորհրդին առընթեր «Պարբերական» հրատ. տպարան, Երեւան-23, Արշակունեաց 2

Գրանցման թիւ 65
Տպաքանակ 20 000
Ստորագրուած է տպագրութեան
Դասիչ 69149
Պատուէր 1558
7.10.1992

digitised by A.R.A.R.@